

SUPPLY CONTRACT

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

No. 01 ME/AR/16

This Contract is made
Սույն պայմանագիրը կնքված է

between

Closed Joint Stock Company “Nork Marash” Medical Center

13 Armenakyan str, Nork, Yerevan 0047, Republic of Armenia

represented by Director Muradyan Lida,

acting on the basis of the Charter

hereinafter called **“Buyer”**

«Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն» Փակ Բաժնետիրական Ընկերության

ՀՀ, ք. Երևան, 0047, Նորք, Արմենակյան փողոց 13,

ի դեմս տնօրեն Լիդա Մուրադյանի,

ով գործում է կանոնադրության հիման վրա,

(այսուհետ՝ **Գնորդ**)

and

և

VAMED ENGINEERING GmbH

Sterngasse 5, A-1230, Vienna, Austria

represented by Peter Werner and Tomas Chal,

acting on the basis of the Power of Attorney dated 28.11.2016

hereinafter called **“Supplier”**

VAMED ENGINEERING GmbH

Ավստրիա, Վիեննա, A-1230, Շտեռնգասսե 5,

ի դեմ Պիտեր Վեռների և Թոմաս Չալի,

ովքեր գործում են լիազորագրի հիման վրա տրված 28.11.2016 թ.-ին

(այսուհետ՝ **Մատակարար**)

միջև

concerning the

Supply and Installation of Medical Equipment

as well as Relevant Preparatory Works

for the Nork Marash Medical Center,

13 Armenakyan str, Nork, Yerevan 0047, Republic of Armenia,

(hereinafter called the **“Project”**)

Նորք Մարաշ Բժշկական Կենտրոնի համար,

ՀՀ, ք. Երևան, 0047, Նորք, Արմենակյան փողոց 13,

բժշկական սարքավորումների մատակարարման և տեղադրման,

ինչպես նաև համապատասխան նախապատրաստական աշխատանքների կատարման

վերաբերյալ

(այսուհետ՝ **Ծրագիր**)

on December 21, 2016.

2016թ. –ի դեկտեմբերի 21-

ին:

<p style="text-align: center;"><u>PREAMBLE</u></p> <p>Whereas, the Buyer is desirous to have the Nork Marash Medical Center equipped with medical equipment together with preparatory works</p> <p>Whereas, the Buyer has invited the Supplier to submit an offer for the implementation of the Project</p> <p>Whereas, the Supplier has submitted a respective offer which has been accepted by the Buyer subject to the execution of a formal supply contract</p> <p>Now, therefore, the Parties hereto have agreed as follows:</p>	<p style="text-align: center;"><u>ՆԱԽԱԲԱՆ</u></p> <p>Գնորդը ցանկանում է, որ Նորք Մարաշ Բժշկական Կենտրոնը կահավորվի բժշկական սարքավորումներով՝ նախապատրաստման աշխատանքների կատարման հետ միասին:</p> <p>Մատակարարը հրավիրել է Գնորդին ներկայացնելու Ծրագրի իրականացման առաջարկը:</p> <p>Մատակարարը ներկայացրել է առաջարկը, որն ընդունվել է Գնորդի կողմից և ենթակա է ֆորմալ մատակարարման պայմանագրի իրականացման:</p> <p>Սույնով Կողմերը համաձայնվում են հետևյալի մասին.</p>
--	---

0. DEFINITIONS

In this Contract unless the context requires otherwise.

“Soft-Loan Agreement” means the credit agreement referred to in Clause 4.1.

“Annex” means any of the Annexes 1 to 13 referred to in Clause 15.10.

“Bill of Quantities” means the bill of quantities as per Annex 1 and Annex 1A.

“Buyer” means the Closed Joint Stock Company “Nork Marash” Medical Center”.

“Acceptance Certificate per Item” means the certificate referred to in Clause 11.2 a).

“Accumulated Acceptance Certificate” means the certificate referred to in Clause 11.2 b).

“Final Acceptance Certificate” means the certificate referred to in Clause 11.6

“Handover Certificate of Project Documentation” means the certificate which confirms the transfer of Project Documentation and Drawings to the Buyer and serves as final confirmation of performance of the Design and Engineering Services.

“Contract” means the present document signed by the Parties, including all Annexes thereto and all documents incorporated by reference therein.

0. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Սույն Պայմանագրում սահմանումները մեկնաբանվում են հետևյալ կերպ, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում:

Արտոնյալ Վարկային Պայմանագիր - 4.1 կետում նշված վարկային պայմանագիրը:

Հավելված - Հավելված 1-13-ից որևէ մեկը նշված 15.10 կետում:

Ծավալաթերթ – նշանակում է Հավելված 1-ում և Հավելված 1A-ում նշված ծավալաթերթը:

Գնորդ - «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն Փակ Բաժնետիրական Ընկերություն:

Սարքավորման Ընդունման Ակտ – 11.2 a) կետում նշված վկայականը:

Ընդհանուր Ընդունման Ակտ – 11.2 b) կետում նշված վկայականը:

Վերջնական Ընդունման Ակտ - 11.6 կետում նշված վկայականը:

Նախագծային Փաստաթղթերի Հանձնման Ակտ – ակտ, որը հաստատում է Նախագծային Փաստաթղթերի և Գծագրերի հանձնումը Գնորդին և ծառայում է որպես Նախագծման և Ինժեներական ծառայությունների վերջնական հաստատում:

Պայմանագիր – սույն փաստաթուղթը՝ երկկողմանի ստորագրված, ներառյալ հավելվածները և այն բոլոր փաստաթղթերը, որոնց պայմանագրում հղում է կատարվում:

<p>“Contract Price” means the price referred to in Clause 3.1.</p> <p>“Commencement Date” means the date at which all the conditions stipulated in Clause 14.2 have been fulfilled.</p> <p>“Day” means calendar day.</p> <p>“Project Documentation” means documentation and drawings as per Clauses 2.1.7 to be prepared by the Supplier according to the provisions of this Contract</p> <p>“Technical Documentation” means documentation required for the installation, operation and maintenance of the Equipment.</p> <p>“Drawings” means the drawings as per Clauses 2.1.2, 2.1.3, 2.1.5 and 2.1.7.</p> <p>“Existing Drawings of the Building” means documentation required for the implementation of works to be provided by the Buyer according to the provisions of this Contract.</p> <p>“Equipment” means the goods to be supplied by the Supplier according to the stipulations of the Contract and as indicated in the Bill of Quantities.</p> <p>“Item” means the medical equipment listed under a specific item number in Annex 1.</p> <p>“Manufacturer” means the manufacturer of the Equipment to be supplied under this Contract.</p> <p>“Delivery Note” means a document that accompanies an Equipment shipment and lists</p>	<p>Պայմանագրի Գինը – 3.1 կետում նշված գինը:</p> <p>Սկսելու Օրը - ամսաթիվը, երբ 14.2 կետով սահմանված բոլոր պայմանները կատարված են:</p> <p>Օր – օրացուցային օր:</p> <p>Նախագծային Փաստաթղթեր – սույն պայմանագրի 2.1.7 դրույթներին համապատասխան Մատակարարի կողմից պատրաստվող փաստաթղթեր և գծագրեր:</p> <p>Տեխնիկական Փաստաթղթեր- Սարքավորումների շահագործման, տեղադրման և սպասարկման համար պահանջվող փաստաթղթեր:</p> <p>Գծագրեր – 2.1.2, 2.1.3, 2.1.5 և 2.1.7. կետերում նշված գծագրերը:</p> <p>Շենքի Առկա Գծագրեր – սույն պայմանագրի դրույթների համաձայն աշխատանքների կատարման համար պահանջվող փաստաթղթեր, որոնք տրամադրվում են Գնորդի կողմից:</p> <p>Սարքավորումներ – Ծավալաբերթում նշված այն ապրանքները, որոնք Մատակարարի կողմից ենթակա են մատակարարման՝ համաձայն սույն Պայմանագրի դրույթների:</p> <p>Սարքավորում – Հավելված 1-ում նույնականացման համարով նշված բժշկական սարքավորումը:</p> <p>Արտադրող - սույն Պայմանագրի համաձայն մատակարարման ենթակա սարքավորման արտադրողը:</p> <p>Մատակարարման Ծանուցում – Սարքավորման մատակարարումն ուղեկցող փաստաթուղթ, որը</p>
--	--

<p>details about the Equipment delivered which shall be prepared by the Supplier and signed by the Buyer upon delivery, however, doesn't serve as a payment document.</p> <p>“Party” means the Buyer or the Supplier.</p> <p>“Parties” means the Buyer and the Supplier.</p> <p>“Design and Engineering Services” mean the elaboration of Drawings and Project Documentation as per Clause 2.1</p> <p>“Services on Site” means Preparatory Works, including mechanical and electrical part.</p> <p>“Services” means the services (Design and Engineering Services as well as Services on Site) to be performed by the Supplier according to the stipulations of the Contract.</p> <p>“Site” means the areas at the existing building of Nork Marash Medical Center, 13 Armenakyan Str, Nork, Yerevan 0047, Armenia, where the Project is implemented.</p> <p>“Technical Specifications” means the technical specifications as per Annex 2.</p> <p>“Supplies” means the deliveries of the Equipment listed in Annex 1 and Annex 1A according to the stipulations of the Contract.</p> <p>“Time for Completion” means the period for the completion of the Works starting from the Commencement Date as per Time Schedule in Annex 4.</p>	<p>պարունակում է մատակարարվող Սարքավորման վերաբերյալ տվյալներ, և որը պետք է պատրաստվի Մատակարարի կողմից և ստորագրվի Գնորդի կողմից, սակայն այնուամենայնիվ չի հանդիսանում վճարման փաստաթուղթ:</p> <p>Կողմ – Գնորդը կամ Մատակարարը:</p> <p>Կողմերը - Գնորդն ու Մատակարարը:</p> <p>Նախագծման և Ինժեներական Ծառայություններ - 2.1. կետում նշված Գծագրերի և Նախագծային Փաստաթղթերի պատրաստումը:</p> <p>Ծառայությունները Տեղում – նախապատրաստական աշխատանքներ, ներառյալ մեխանիկական և էլեկտրական մասը:</p> <p>Ծառայություններ – այն ծառայությունները (Նախագծման և Ինժեներական Ծառայությունները, ինչպես նաև Ծառայությունները Տեղում), որոնք ենթակա են մատուցման Մատակարարի կողմից՝ համաձայն Պայմանագրի դրույթների</p> <p>Տեղ – շենքի այն տարածքները, որտեղ Ծրագիրը ենթակա է իրականացման, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0047, Նորք, Արմենակյան փողոց, 13:</p> <p>Տեխնիկական Մասնավորագրեր - Հավելված 2-ով նախատեսված մասնավորագրերը:</p> <p>Մատակարարումներ – Պայմանագրի Հավելված 1-ում և Հավելված 1A-ում նշված սարքավորումների մատակարարումը:</p> <p>Ավարտման Ժամկետ - աշխատանքները ավարտելու ժամանակահատված՝ հաշված սկսելու օրվանից՝ համաձայն Հավելված 4-ով սահմանված ժամանակացույցի:</p>
--	--

<p>“Time Schedule” means the time schedule as per Annex 4.</p> <p>“Works” means the entire scope of works (all Supplies and Services) to be executed according to the provisions of this Contract.</p> <p>Words importing one gender include all other genders and words importing the singular include the plural and vice versa.</p> <p>Any reference to recitals, clauses, sub-clauses and Annexes are to recitals, clauses and sub-clauses of, and Annexes to, this Contract.</p> <p>Any reference to a “Day”, “week”, “month” or “year” is to that Day, week, month or year in accordance with the Gregorian calendar.</p> <p>If any period of time is specified from a given Day, or the Day of a given act or event, it is to be calculated exclusive of that Day (and if any period of time falls on a Day which is not a business Day, then that period is to be deemed to only expire on the next business Day).</p> <p>Headings in this Contract are for ease of reference only and shall not be taken into account in construing any part of this Contract.</p>	<p>Ժամանակացույց - Հավելված 4-ով սահմանված ժամանակացույց:</p> <p>Աշխատանքներ - Բոլոր աշխատանքները (Մատակարարումներ և Ծառայություններ), որոնք պետք է կատարվեն Պայմանագրի դրույթներին համապատասխան:</p> <p>Բառերը, որոնք արտահայտում են մեկ սեռ ներառում են նաև բոլոր սեռերը, և բառերը, որոնք արտահայտում են եզակի իմաստ ներառում են նաև հոգնակին և հակառակը:</p> <p>Ցանկացած հղում պարբերություններին, կետերին, ենթակետերին և Հավելվածներին հղում են սույն Պայմանագրի պարբերություններին, կետերին, ենթակետերին և Հավելվածներին:</p> <p>Ցանկացած հղում «Օր», «շաբաթ», «ամիս» կամ «տարի» համարվում է այդ օրը, շաբաթը, ամիսը կամ տարին՝ համաձայն Գրիգորյան օրացույցի:</p> <p>Եթե որևէ ժամանակահատված նշված է տվյալ օրվանով կամ տվյալ ակտի կամ դեպքի օրվանով, այն պետք է հաշվարկվի բացառապես այդ օրը (և եթե որևէ ժամանակահատված համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա այդ ժամանակահատվածը համարվում է լրացած միայն դրան հաջորդ աշխատանքային օրը):</p> <p>Սույն պայմանագրում վերնագրերը հեշտացման համար են և չպետք է դրվեն Պայմանագրի մասերից որևէ մեկի մեկնաբանման հիմքում:</p>
---	--

<p>1. SUBJECT OF CONTRACT</p> <p>The Supplier undertakes to supply the Equipment and perform the Services for the Nork Marash Medical Center, 13 Armenakyan Str, Nork, Yerevan 0047, Armenia, at the terms and conditions of this Contract.</p>	<p>1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</p> <p>Մատակարարը պարտավորվում է մատակարարել սարքավորումները և մատուցել ծառայությունները Նորք-Մարաշ Բժշկական Կենտրոնի համար (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0047, Նորք, Արմենակյան փողոց, 13 շենք) սույն Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:</p>
<p>2. SCOPE OF WORKS</p> <p>2.1. Design and Engineering services:</p> <p>2.1.1. Adaptation of Bill of Quantities as per Annex 1 and Annex 1A as well as the final Technical Specifications as per Annex 2 (if required) for confirmation by the Buyer to be ready for purchase, as stipulated in clause 2.4.</p> <p>2.1.2. Elaboration of drawings for the premises dedicated to installation of the fixed Equipment (Computer Tomograph with accessories, Angiography system with accessories, X-Ray unit with accessories), using on-site measurements of the existing rooms.</p> <p>2.1.3. Elaboration of room equipment layout drawings showing the allocation of fixed Equipment in each single room to be equipped by the Supplier (considering the layout concept already prepared and agreed in Annex 3).</p> <p>2.1.4. Elaboration of a technical task (“Description of the Preparatory Works”, Annex 6), this shall serve as the basis for the further</p>	<p>2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ</p> <p>2.1. Նախագծման և Ինժեներական Ծառայություններ</p> <p>2.1.1. Համաձայն Հավելված 1-ի և Հավելված 1A-ի Ծավալաթերթի ճշգրտումը, ինչպես նաև համաձայն Հավելված 2-ի Տեխնիկական մասնավորագիրը (եթե պահանջվում է) Գնորդի կողմից գնման հաստատման համար՝ համաձայն 2.4. կետի:</p> <p>2.1.2. Ֆիքսված սարքավորումների տեղադրման վայրի հետ կապված գծագրերի մշակում (Համակարգչային Տոմոգրաֆիայի համակարգ իր պարագաներով, Անգիոգրաֆիայի համակարգ իր պարագաներով, Ռենտգեն համակարգ իր պարագաներով) հաշվի առնելով առկա սենյակների չափումները:</p> <p>2.1.3. Մատակարարի կողմից յուրաքանչյուր սենյակում տեղադրման ենթակա հիմնական սարքավորումների դասավորությունը որոշող գծագրերի պատրաստումը (Հավելված 3-ում պատրաստված և համաձայնեցված կոնցեպտ-գծագիր):</p> <p>2.1.4. Տեխնիկական առաջադրանքի պատրաստում (Նախապատրաստական</p>

<p>elaboration of the Project Documentation as per clause 2.1.7.</p> <p>2.1.5.Elaboration of installation drawings for the fixed Equipment to be supplied by the Supplier.</p> <p>2.1.6.Submission to the Buyer of pre-installation data of Equipment requiring connections to electrical and/or mechanical systems and/or to buildings.</p> <p>2.1.7.Elaboration of Project Documentation (including as-built drawings) for the preparatory works at the premises dedicated to installation of the fixed Equipment to be supplied by the Supplier (Computer Tomograph with accessories, Angiography system with accessories, X-Ray unit with accessories). The Project Documentation will include the drawings and descriptions as required for the execution of the preparatory works and will be in conformity with Armenian technical standards and regulations. It will include data of Equipment requiring connections to electrical and/or mechanical systems and/or to buildings.</p> <p>2.1.8.Preparation of a full Technical Documentation for all Equipment supplied (user manuals, service manuals, etc.) that shall be submitted after handing over of the Equipment.</p> <p>2.2. Execution of Preparatory Works according to Annex 6 and the Project Documentation, including</p> <ul style="list-style-type: none"> ▪ Taking over of empty rooms (old equipment shall be dismantled by the Buyer 	<p>աշխատանքների տեխնիկական նկարագիր, Հավելված 6), սա հիմք կհանդիսանա 2.1.7 կետով սահմանված Նախագծային փաստաթղթերի հետագա պատրաստման համար:</p> <p>2.1.5.Մատակարարի կողմից մատակարարման ենթակա հիմնական սարքավորումների տեղադրման գծագրերի պատրաստումը:</p> <p>2.1.6. Էլեկտրական և/կամ մեխանիկական համակարգերին և/կամ շենքերին կապ պահանջող սարքավորումների նախատեղադրման տվյալները Գնորդին փոխանցելը:</p> <p>2.1.7.Նախագծային փաստաթղթերի պատրաստումը /ներառյալ ինչպես իրականացված գծագրերը/ հիմնական սարքավորումների (Համակարգչային Տոմոգրաֆիայի համակարգ իր պարագաներով, Անգիոգրաֆիայի համակարգ իր պարագաներով, Ռենտգեն համակարգ իր պարագաներով) տեղադրման հետ կապված նախապատրաստական աշխատանքների համար: Նախագծային փաստաթղթերը ներառում են գծագրերը և նկարագրերը, որոնք պահանջվում են նախապատրաստական աշխատանքների համար և պետք է համապատասխանեն Հայաստանի տեխնիկական ստանդարտներին և պահանջներին: Այն պետք է ներառի էլեկտրական և/կամ մեխանիկական համակարգերին և/կամ շենքերին կապ պահանջող սարքավորումների տվյալները:</p> <p>2.1.8. Բոլոր մատակարարված սարքավորումների համար Տեխնիկական Փաստաթղթերի պատրաստում (օգտագործման ուղեցույց, սպասարկման ուղեցույց և այլն), որոնք կտրամադրվեն Սարքավորումները հանձնելուց:</p> <p>2.2. Նախապատրաստական աշխատանքների կատարում՝ համաձայն Հավելված 6-ի և Նախագծային Փաստաթղթերի, ներառյալ</p>
---	---

<p>within 2,5 month from commencement)</p> <ul style="list-style-type: none"> ▪ Execution of Preparation works according to the Project Documentation, including: <ul style="list-style-type: none"> - Civil Works (demolition works, renovation and preparatory works of floors, walls, ceilings, doors, windows) - Mechanical Systems (new installation of ventilation and air conditioning, adaptation and renovation of water supply, sewage and heating) - Electrical Systems (new installation of high and low voltage systems and lighting, including IT data lines) - Medical Gas Systems (including connection to the hospital gas system) - Execution of Pre-installation Requirements for the installation of the fixed Medical Equipment, according to the instructions and recommendations of the manufacturers - Finalization of interior finishes and M&E systems after Medical Equipment installation ▪ Handing over of the finished rooms after installation of Equipment <p>2.3. Delivery of the Equipment listed in Annex 1 according to DAP Yerevan (13, A. Armenakyan Str. Nork Marash Medical Center), Incoterms 2010 subject to final confirmation as per Clause 2.4.</p> <p><i>It is agreed that any information relating to</i></p>	<ul style="list-style-type: none"> ▪ Դատարկ սենյակների ընդունում (հին սարքավորումները պետք է ապամոնտաժվեն Գնորդի կողմից սկսելու օրվանից 2.5 ամսվա ընթացքում): <ul style="list-style-type: none"> ▪ Նախապատրաստական աշխատանքների կատարում՝ համաձայն Նախագծային փաստաթղթերի, ներառյալ՝ <ul style="list-style-type: none"> - Շինարարական աշխատանքներ /քանդման աշխատանքներ, վերանորոգման աշխատանքներ և նախապատրաստական աշխատանքներ՝ հատակի, պատերի, առաստաղի, դռների, պատուհանների/ - Մեխանիկական համակարգեր /օդափոխության և օդորակման նոր տեղադրում, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման հարմարեցումն ու վերանորոգումը/: - Էլեկտրական համակարգեր /էլեկտրամատակարարման և լուսավորության, ինչպես նաև կոմունիկացիոն համակարգեր ներառյալ IT գծեր/ - Բժշկական զազամատակարարման համակարգ /ներառյալ միացումը առկա հիվանդանոցային համակարգին/ - Ֆիքսված բժշկական սարքավորման տեղադրման համար նախատեղադրման պահանջների կատարումը՝ համաձայն արտադրողի պահանջների - Ներքին հարդարման, մեխանիկական և էլեկտրական սարքավորումների համակարգերի ամփոփում բժշկական սարքավորումների տեղադրումից հետո: ▪ Պատրաստի սենյակների փոխանցումը բժշկական սարքավորումների տեղադրումից հետո: <p>2.3. Համաձայն 2.4. կետի՝ Հավելվածում 1-ում նշված Սարքավորումների մատակարարումը ենթակա է վերջնական հաստատման՝ համաձայն DAP Yerevan (Նորք Մարաշ Բժշկական Կենտրոն, Ա. Արմենակյան փողոց, 13), Incoterms 2010 պայմանի:</p>
--	---

the Equipment and its use, such as weights, dimensions, capacities, unit prices, colours and other data contained in catalogues, prospects, circulars, advertisements, illustrations and/or price-lists of the Supplier, shall not take effect as terms of the Contract unless expressly referred to in the Contract.

In case of discrepancies and/or inconsistencies between the Bill of Quantities and the Technical Specifications the terms of the Bill of Quantities shall prevail.

2.4. The Parties have agreed the attached to the Contract as Annex 1 “Bill of Quantities”, Annex 1A “Bill of Quantities with unit prices” and as Annex 2 “Technical Specifications” are subject to formal “Readiness for Purchase” announcement by the Supplier and subsequent formal confirmation by the Buyer as follows:

1) within 35 calendar days upon the Commencement Date as per Clause 14 hereof the Buyer shall confirm that the Supplier is entitled to start with the ordering of the Equipment as per Annex 1 – Bill of Quantities, Annex 1A – “Bill of Quantities with unit prices” and as per Annex 2 – Technical Specifications. In case the Buyer doesn’t provide the Supplier with the relevant confirmation within 45 days upon the Commencement Date as per clause 14 / doesn’t provide the grounds for reasonable refusal to confirm as per item 2) below, the relevant confirmation shall be deemed as granted.

2) In case it is necessary to make any adjustments in the Bill of Quantities / specification of an Item (compared to the Specifications as per Annex 2), caused by updates or production changes of the manufacturers models, types or equipment

Համաձայնեցված է, որ ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է սարքավորումներին և դրանց օգտագործմանը, ինչպիսիք են քաշը, չափերը, ծավալները, միավորի գինը, գույները և այլ տվյալները, որոնք պարունակվում են կատալոգներում, ազդագրերում, շրջաբերականներում, գովազդներում, պատկերազարդումներում և/կամ մատակարարի գնացուցակներում, չպետք է համարվեն պայմանագրի պայմաններ, քանի դեռ ուղղակիորեն նշված չեն պայմանագրի մեջ:

Ծավալաթերթի և Տեխնիկական բնութագրերի միջև հակասությունների և/կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում գերակայում են Ծավալաթերթի նորմերը:

2.4. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրին կից Հավելված 1-ը՝ Ծավալաթերթը, Հավելված 1A-ն՝ Ծավալաթերթը գներով և Հավելված 2-ը՝ Տեխնիկական Մասնավորագրերը ենթակա են Կողմերի կողմից գնելու պատրաստ լինելու վերաբերյալ ծանուցման և համապատասխանաբար Գնորդի կողմից ֆորմալ հաստատման հետևյալ կերպ՝

1) Համաձայն 14-րդ կետի՝ Սկսելու Օրվանից 35 օրացուցային օրվա ընթացքում Գնորդը պետք է հաստատի, որ Մատակարարն իրավունք ունի սկսել Սարքավորումների պատվիրելը՝ համաձայն Հավելված 1-ի՝ Ծավալաթերթի, Հավելված 1A-ի՝ Ծավալաթերթը գներով և Հավելված 2-ի՝ Տեխնիկական Մասնավորագրերի: Այն դեպքում, երբ Գնորդը Սկսելու օրվանից 45 օրվա ընթացքում Մատակարարին չի տրամադրում համապատասխան հաստատումը՝ համաձայն 14 կետի և չի ներկայացնում հիմնավորված մերժման պատճառները, ապա համապատասխան հաստատումը համարվում է տրված:

2) Այն դեպքում, երբ անհրաժեշտ լինի կատարել ցանկացած ճշգրտում Ծավալաթերթում/ Սարքավորման մասնավորագրում (համեմատած Հավելված 2-ի Մասնավորագրերի)

accessories, the Supplier will produce a corrected Specification sheet. Such corrected Specification shall be signed by both Parties and replace the relevant original Specification of this item.

In case the Buyer is desirous to make any reasonable adjustments in the Specification of an Item (eg. changes of accessories), the Parties shall agree on the relevant changes and the Supplier will produce a corrected Specification sheet. Such corrected Specification shall be signed by both Parties and replace the relevant original Specification of this item. Such adjustments, if any, can only be made prior to the "Readiness for Purchase" announcement as per clause 2.3.

2.5. Unloading on Site, installation, testing and commissioning of the Equipment at the Site.

2.6. Training of the Buyer's staff in the operation and basic maintenance (to the extent as provided by the Manufacturer) of the Equipment. Training shall be carried out at the Site before handing over of the Equipment to the Buyer as per Annex 12 of the Contract. Detailed Training Schedule will be elaborated after the list of trainees will be presented to the Supplier by the Buyer and Contract comes into force.

2.7. Warranty for a period of 24 months after handing over of the Equipment (Item) to the Buyer in accordance with Annex 11 – Acceptance Certificate per Item, but not longer than 30 months after dispatch (shipment) of the respective Equipment (Item) from European or other countries.

արտադրության փոփոխությունների, մոդելի, տեսակի կամ սարքավորման պարագաների փոփոխման հետևանքով Մատակարարը կպատրաստի ճշգրտված Մասնավորագիր: Նման ճշգրտված Մասնավորագիրը պետք է ստորագրվի Կողմերի կողմից և փոխարինի այդ Սարքավորման համապատասխան բնօրինակ Մասնավորագրին:

Այն դեպքում, երբ Գնորդը ցանկանում է Սարքավորման Մասնավորագրում /օրինակ՝ պարագաների/ կատարել ցանկացած խելամիտ ճշգրտում, Կողմերը պետք է համաձայնվեն կատարված փոփոխություններին և Մատակարարը պետք է կազմի ճշգրտված Մասնավորագիրը: Նման ճշգրտված Մասնավորագիրը պետք է ստորագրվի Կողմերի կողմից և փոխարինի այդ Սարքավորման համապատասխան բնօրինակ Մասնավորագրին: Եթե կլինեն այդպիսի փոփոխություններ, դրանք կարող են կատարվել մինչև 2.3. կետի համաձայն գնման պատրաստ լինելու վերաբերյալ ծանուցելը:

2.5. Տեղում Սարքավորման բեռնաթափումը, տեղադրումը, փորձարկումը և շահագործման հանձնելը:

2.6. Գնորդի աշխատակազմի վերապատրաստումը Սարքավորումների շահագործման և հիմնական սպասարկման (ինչ կարգով, որ նախատեսված է արտադրողի կողմից) համար: Վերապատրաստումը պետք է իրականացվի Տեղում՝ Սարքավորումները Գնորդին հանձնելուց առաջ՝ համաձայն 12-րդ Հավելվածի: Վերապատրաստման մանրամասն ժամանակացույցը կկազմվի վերապատրաստվողների ցանկը Գնորդի կողմից Մատակարարին ներկայացվելուց հետո և Պայմանագիրը կմտնի ուժի մեջ:

2.7. Սարքավորումների /Սարքավորման/ Երաշխիքի ժամկետը 24 ամիս է՝ Գնորդին հանձնելուց հետո՝ համաձայն Հավելված 11-ի /Սարքավորման Ընդունման Ակտ/, բայց ոչ ուշ, քան համապատասխան Սարքավորում(ներ)ը եվրոպական կամ այլ երկրներից առաքելուց 30 ամիս հետո:

<p>3. CONTRACT PRICE</p> <p>3.1 The Contract Price amounts to EURO 7.000.000 - (in words: seven million)</p> <p>3.2 The Contract Price is broken down as follows:</p> <p>3.2.1. Price of the Equipment including Installation, Commissioning and Training - EURO 6.300.000.</p> <p>3.2.2. Price of Design and Engineering Services - EURO 340.000.</p> <p>3.2.3. Price of Preparatory Works, including Mechanical and Electrical parts - EURO 360.000.</p> <p>3.3 The Contract Price shall be considered as fixed for the Time for Completion as stipulated in Clause 5.</p> <p>3.4 The price as per Clause 3.2.1 is composed of the unit prices as per Annex 1A.</p> <p>3.5 In case the Time for Completion is extended for reasons beyond the control of the Supplier the part of the Contract Price which has remained unpaid until 31.08.17 shall escalate at a rate of 0,5% per month.</p> <p>3.6 In case the Time for Completion is extended for reasons beyond the control of the Supplier by the period of more than 3 months, the Supplier shall be entitled to unilaterally terminate the Contract and receive the outstanding payment calculated based on the Contract Price as per clause 3.5, as well as compensation of its costs due to such Contract termination.</p> <p>3.7 In case the Buyer at any time suspends the Project realization, the Buyer shall compensate the Supplier any additional costs of the Supplier due to such suspension. In case of</p>	<p>3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ</p> <p>3.1 Պայմանագրի գինը կազմում է 7.000.000 /յոթ միլիոն/ եվրո:</p> <p>3.2 Պայմանագրի գինը հաշվարկվում է հետևյալ կերպ.</p> <p>3.2.1 Սարքավորումների գինը ներառյալ տեղադրումը, շահագործման հանձնելը և վերապատրաստումը - 6.300.000 ԵՎՐՈ:</p> <p>3.2.2 Նախագծման և Ինժեներական Ծառայությունների գինը - 340.000 ԵՎՐՈ:</p> <p>3.2.3 Նախապատրաստական աշխատանքները, ներառյալ մեխանիկական և էլեկտրական մասերը - 360.000 ԵՎՐՈ:</p> <p>3.3 Պայմանագրի գինը համարվում է ֆիքսված Ավարտման Ժամկետով՝ 5-րդ կետով նախատեսված կարգով:</p> <p>3.4 3.2.1 կետով սահմանված գինը կազմված է Հավելված 1A-ով նախատեսված սարքավորումների գներից:</p> <p>3.5 Եթե Ավարտման Ժամկետը երկարաձգվում է Մատակարարից անկախ պատճառներով, Պայմանագրի Գնի այն մասին, որը չի վճարվել մինչև 31.08.17 թվականը, հավելագրվում են տոկոսներ՝ ամսական 0.5 %-ի չափով:</p> <p>3.6 Եթե Ավարտման Ժամկետը երկարաձգվում է Մատակարարից անկախ պատճառներով ավելի քան 3 ամիս ժամկետով, Մատակարարն իրավունք կունենա միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը և ստանալու չվճարված գումարը, որը հաշվարկվում է 3.5 կետով սահմանված Պայմանագրի Գնի հիման վրա, ինչպես նաև պահանջելու Պայմանագրի այդպիսի լուծման հետևանքով առաջացած ծախսերի փոխհատուցում:</p> <p>3.7 Եթե Գնորդը երբևէ երկարաձգի Ծրագրի իրականացումը, ապա պետք է փոխհատուցի Մատակարարին դրա հետևանքով առաջացած Մատակարարի բոլոր հավելյալ ծախսերը: Եթե</p>
---	--

the Project and/or Works suspension for more than 3 months, the Supplier shall be entitled to unilaterally terminate the Contract and receive a full payment for the Works done including compensation of costs due to such suspension and termination.

3.8 All taxes, duties, levies and fees arising out of or in connection with the execution of the Works by the Supplier in Armenia shall be borne by the Buyer. In case the Buyer fails to pay such taxes, duties, levies and fees in due time the Supplier shall be entitled to diminish the Works and to increase the price of the actually executed Works by the value of the taxes, duties, levies and fees paid by the Supplier.

3.9 The Contract Price is based on the laws in force in Armenia at the date of signature of the Contract. In case any amendment of these laws, in particular, but not limited to the introduction of new taxes like VAT, should cause additional costs to the Supplier, the Buyer shall reimburse such costs to the Supplier. If the Buyer fails to reimburse such costs within 10 days after receipt of a respective invoice from the Supplier, the Supplier shall be entitled to terminate the Contract and claim from the Buyer the compensation of the loss of profit suffered from such termination. The risk of the change of law is borne by the Buyer. Change of law means the coming into effect after the date of this Contract of any law or regulation applicable to the Project; or any applicable judgement of a relevant court of law which changes the interpretation of the applicable law which affects the Suppliers' performance under the Contract. If the Supplier suffers (or will suffer) delay and/or incurs additional costs as a result of a change of law, then the Supplier will be entitled to an adjustment to the Contract

Ծրագրի կամ Աշխատանքների երկարաձգման հանգամանքները տևում են 3 ամսից ավելի, ապա Մատակարարը իրավունք կունենա միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը և ստանալու լրիվ փոխհատուցում կատարված աշխատանքի համար, ներառյալ պայմանագրի երկարաձգման և լուծման հետևանքով առաջացած ծախսերի փոխհատուցում:

3.8 Բոլոր այն հարկերի, տուրքերի և այլ վճարների վճարման պարտականությունը, որոնք առաջանում են կապված Հայաստանում Մատակարարի աշխատանքների իրականացման հետ կրում է Գնորդը: Եթե Գնորդը ժամանակին չի վճարում այդպիսի հարկերը, տուրքերը և այլ վճարները, Մատակարարը իրավունք կունենա նվազեցնել Աշխատանքները և ավելացնել փաստացի կատարված աշխատանքների գինը իր կողմից վճարած հարկերի, տուրքերի և այլ վճարների չափով:

3.9 Պայմանագրի գինը որոշվում է պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ օրենսդրության հիման վրա: Այդ օրենսդրության ցանկացած փոփոխություն, չսահմանափակվելով նոր հարկատեսակների ավելացմամբ ինչպիսին է ԱԱՀ-ն, որը կառաջացնի լրացուցիչ ծախսեր Մատակարարի համար, ենթակա է փոխհատուցման Գնորդի կողմից: Եթե Գնորդը այդ ծախսերը չի փոխհատուցում Մատակարարին համապատասխան հաշիվը ստանալուց 10 օրվա ընթացքում, Մատակարարը կարող է լուծել պայմանագիրը և պահանջել Գնորդից փոխհատուցել պայմանագրի լուծման հետևանքով բաց թողնված օգուտը: Օրենքի փոփոխման ռիսկերը կրում է Գնորդը: Օրենքի փոփոխություն է համարվում Պայմանագրի կնքումից հետո ուժի մեջ մտած ցանկացած կարգավորում կամ օրենք, որը կիրառելի է Ծրագրի նկատմամբ, ցանկացած դատական ատյանի համապատասխան որոշում, որը փոփոխում է կիրառվելիք օրենքի մեկնաբանումը, ինչն էլ ազդում է Մատակարարի կողմից պայմանագրի իրականացման վրա: Եթե օրենքի փոփոխման հետևանքով Մատակարարը կրում է (կամ կարող է կրել) լրացուցիչ ծախսեր

<p>Price and/or an extension of the Time for Completion.</p>	<p>կամ տուժում է ուշացման հետևանքով, Մատակարարը իրավունք կունենա վերանայել Պայմանագրի Գինը և/կամ հետաձգել Ավարտման Ժամկետը:</p>
<p>4. TERMS OF PAYMENT</p> <p>4.1. The Contract Price stipulated in Clause 3.1 shall be paid out of a Soft Loan Agreement to be concluded between the Erste Group Bank AG acting as the lender and the Buyer acting as the borrower as follows:</p> <p>4.1.1. Advance payment</p> <p>The advance payment in the amount of 20 % of the Contract Price, namely EUR 1.400.000,00 (hereinafter referred to as the “First Payment”) shall be paid against presentation of the following documents:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Commercial invoice signed by the Supplier, ▪ Advance Payment Guarantee in the amount of 20% of the Contract Price, ▪ Performance bond in the amount of 5% of the Contract Price. <p>The Advance Payment Guarantee shall be issued in the form and according to the conditions set out in Annex 8 of the Contract.</p> <p>The Advance Payment Guarantee shall be valid through the time for completion and shall be reduced as set out in Annex 8.</p> <p>The Performance bond shall be issued in the form and according to the conditions set out in Annex 9 of the Contract and shall be valid through the time for completion and become void and without effect on the date of the Accumulated Acceptance Certificate issued as per Annex 12.</p>	<p>4. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</p> <p>4.1 3.1 կետում նշված Պայմանագրի գինը ենթակա է վճարման որպես Փոխատու հանդիսացող Erste Group Bank AG-ի և որպես Փոխառու հանդիսացող Գնորդի միջև կնքվող Վարկային պայմանագրից հետևյալ կարգով.</p> <p>4.1.1 Կանխավճար</p> <p>Պայմանագրի Գնի 20%-ը՝ 1.400.000,00 ԵՎՐՈ /այսուհետ՝ Առաջին Վճարում/ որպես կանխավճար ենթակա է վճարման հետևյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Մատակարարի կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագիրը, ▪ Պայմանագրի գնի 20%-ի չափով Կանխավճարի Երաշխիքը, ▪ Պայմանագրի գնի 5%-ի չափով Կատարողականի Երաշխիքը: <p>Կանխավճարի Երաշխիքը տրամադրվում է համաձայն Պայմանագրի Հավելված 8-ով սահմանված ձևի և պայմանների:</p> <p>Կանխավճարի Երաշխիքը վավեր է Ավարտման ժամկետի ընթացքում և կրճատվում է Հավելված 8-ով սահմանված կարգով:</p> <p>Կատարողականի Երաշխիքը տրվում է համաձայն Պայմանագրի Հավելված 9-ով սահմանված պայմանների, վավեր է իրականացման ժամկետի ընթացքում և դառնում է անվավեր և ուժը կորցնում է Ընդհանուր Ընդունման Ակտի օրվանից՝ համաձայն Հավելված 12-ի:</p>

<p>The First Payment in the amount of 20% of the Contract Price (EUR 1.400.000,00) shall be made out of the Soft Loan Agreement within 15 (fifteen) calendar days after effectiveness of Soft Loan Agreement.</p> <p>4.1.2. Progress Payments</p> <p>The progress payments should be paid out of the Soft Loan Agreement as follows:</p> <p>4.1.2.1. Design and Engineering Services</p> <p>The Buyer shall make a payment for Design and Engineering Services after handover of the Project Documentation to the Buyer. The completion of the Design and Engineering Services shall be documented by the Handover certificate of Project Documentation and followed by the commercial invoice issued in the amount specified in the Clause 3.2.2, with the payable amount reduced by 20% due to the advance settlement and amounting to EUR 272.000,00.</p> <p>4.1.2.2. Equipment</p> <p>A) The Buyer shall pay 25% of the Price of Equipment specified in the clause 3.2.1, namely EUR 1.575.000,00 for the Ordering of Equipment according to the Bill of Quantities, after confirmation of final Bill of Quantities (Annex 1 and Annex 1A) as per Clause 2.4 on the basis of:</p> <ul style="list-style-type: none"> - Commercial invoice signed by the Supplier for the Ordering of Equipment according to the Bill of Quantities. <p>B) 20 % of the Price of Equipment namely EUR 1.260.000,00 shall be paid <i>pro rata</i> upon the readiness for shipment of the Equipment against presentation of the following documents:</p>	<p>Պայմանագրի գնի 20% կանխավճարի չափով Առաջին Վճարումը (1.400.000,00 ԵՎՐՈ) պետք է կատարվի Արտոնյալ Վարկային Պայմանագրից՝ այն ուժի մեջ մտնելուց հետո 15 /տասնհինգ/ օրացուցային օրվա ընթացքում:</p> <p>4.1.2 Ընթացիկ վճարները</p> <p>Ընթացիկ վճարումները ենթակա են վճարման Արտոնյալ վարկային Պայմանագրից հետևալ կարգով՝</p> <p>4.1.2.1. Նախագծման և Ինժեներական Ծառայություններ</p> <p>Գնորդը պետք է կատարի վճարում Նախագծման և Ինժեներական Ծառայությունների համար՝ Գնորդին Նախագծային Փաստաթղթերը հանձնելուց հետո: Նախագծման և Ինժեներական Ծառայությունների ավարտը պետք է փաստաթղթավորվի Նախագծային Փաստաթղթերի Հանձնման Ակտով և ուղեկցվի 3.2.2 կետով սահմանված արժեքից կանխավճարի 20%-ի չափով նվազեցված գումարի՝ 272.000,00 ԵՎՐՈ-ի վճարման համար տրված հաշիվ-ապրանքագրով:</p> <p>4.1.2.2. Սարքավորումներ</p> <p>A) Գնորդը պետք է 3.2.1 կետում սահմանված Սարքավորման գնի 25%-ը՝ 1.575.000,00 ԵՎՐՈ, վճարի Սարքավորման պատվերի համար՝ համաձայն Ծավալաթերթի՝ վերջնական Ծավալաթերթի (Հավելված 1 և Հավելված 1A)՝ համաձայն 2.4. կետի, հաստատումից հետո՝</p> <ul style="list-style-type: none"> - Ծավալաթերթի համաձայն Սարքավորումների պատվերի համար Մատակարարի կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագրի հիման վրա: <p>B) Սարքավորումների գնի 20%-ը՝ 1.260.000,00 ԵՎՐՈ ենթակա է <i>pro rata</i> վճարման մատակարարումը պատրաստ լինելուն պես հետևյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝</p>
--	---

<ul style="list-style-type: none"> - Commercial invoice signed by the Supplier - Packing list. <p>C) 35 % of the Price of Equipment namely EUR 2.205.000,00 shall be paid <i>pro rata</i> shipment of the Equipment against presentation of the following documents:</p> <ul style="list-style-type: none"> - Commercial invoice signed by the Supplier for the shipment of the Equipment, - Transport Document (CMR and/or BL and/or AWB); - Packing list. <p>4.1.2.3. Preparatory works</p> <p>The Buyer shall make a payment for the Preparatory works on the basis of the commercial invoice issued in the amount specified in the clause 3.2.3, with the payable amount reduced by 20% due to the advance settlement and amounting to EUR 288.000,00 within 20 (twenty) calendar Days after:</p> <ul style="list-style-type: none"> - signing of the Accumulated Acceptance Certificate according to Clause 11.2 b) - or 1) a document signed by the Supplier indicating that the Supplier has notified the Buyer to take-over the installed Equipment and that the Buyer did not issue the Accumulated Acceptance Certificate as per Clause 11.4 nor provided justified reasons for not issuing the Acceptance Certificate (Notification) as well as 2) a confirmation of the Supplier stating that the Supplier has notified the Buyer to take-over the installed Equipment, however, the Buyer hasn't countersigned the Accumulated Acceptance Certificate. - the Supplier provides the Buyer with the Warranty Bond in the form and according to the conditions set out in Annex 10 of the 	<ul style="list-style-type: none"> - Մատակարարի կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագիրը, - Ապրանքը ուղեկցող փաստաթուղթը /Packing list/: <p>C) Սարքավորումների գնի 35%-ը՝ 2.205.000,00 ԵՎՐՈ, ենթակա է վճարման <i>pro rata</i> Սարքավորումները մատակարարելիս հետևյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> - Սարքավորումների մատակարարման համար Մատակարարի կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագիրը, - Տրանսպորտային փաստաթուղթը (CMR և/կամ BL և/կամ AWB); - Ապրանքը ուղեկցող փաստաթուղթը /Packing list/: <p>4.1.2.3. Նախապատրաստական աշխատանքներ</p> <p>Նախապատրաստական աշխատանքների համար Գնորդը կատարում է վճարում՝ 3.2.3 կետով սահմանված արժեքից կանխավճարի 20%-ի չափով նվազեցված գումարի՝ 288.000,00 ԵՎՐՈ-ի վճարման համար տրված հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ ներքոնշյալները կատարելուց հետո 20 Օրվա ընթացքում.</p> <ul style="list-style-type: none"> - համաձայն 11.2b) կետի Ընդհանուր Ընդունման Ակտը ստորագրելուց, - կամ 1) Մատակարարի կողմից ստորագրված փաստաթուղթ՝ նշելով որ Մատակարարը ծանուցել է Գնորդին տեղադրված Սարքավորումները ընդունելու համար և որ Գնորդը չի տրամադրել 11.4 կետի համաձայն Ընդհանուր Ընդունման Ակտը և ոչ էլ ներկայացրել է այդ ակտը /ծանուցում/ չտրամադրելու հիմնավորված պատճառ, ինչպես նաև 2) Մատակարարի հաստատումը՝ նշելով, որ Մատակարարը ծանուցել է Գնորդին ընդունել տեղադրված Սարքավորումները, սակայն, այնուամենայնիվ, Գնորդը չի ստորագրել Ընդհանուր Ընդունման Ակտը: - Մատակարարը Գնորդին ապահովում է Երաշխիքով՝ համաձայն Պայմանագրի Հավելված 10-ով սահմանված պայմանների: Երաշխիքը
--	---

Contract (Warranty Bond). The Warranty Bond shall be issued for the amount of 5 % of the Contract Price and shall be valid within 2 years after issuance of the Accumulated Acceptance Certificate according to Clause 11.2 b) however, not longer than 30 months after dispatch (shipment) of the respective Equipment (Item) from European or other countries.

4.2. If the Buyer does not pay a sum of money when it falls due, the Supplier is entitled to charge interest upon that sum from the date, when payment is due till the date of payment.

The rate of interest shall be 2% above the 6M-Euribor valid on the date of interest calculation for each day of delay.

4.3. The title to the Equipment shall be transferred to the Buyer at the customs terminal or other place to be defined by the Buyer (before customs clearance). After the customs clearance is performed the Buyer shall transfer the Equipment to the Supplier for further transportation by signing of the relevant protocol (except the cases when the customs clearance will be performed on Site). Except the cases when the customs clearance will be performed on Site, during the performance of the customs clearance (starting when the Buyer receives the relevant notice of the Supplier that the Equipment is ready for the customs clearance until the customs clearance is performed) the Buyer shall take all risks with regard to the Equipment (including the destruction of the Equipment). In case the customs clearance isn't performed within 3 weeks upon the relevant notice of the Supplier that the Equipment is ready for customs clearance, the Buyer shall compensate to the Supplier all costs incurred by the Supplier (downtime of trucks, etc.). After delivery to the address mentioned in Clause 2.2 of the Contract the Buyer shall accept the Equipment

պետք է տրամադրվի Պայմանագրի գնի 5%-ի չափով և վավեր է 11.2 b) կետի համաձայն Ընդհանուր Ընդունման Ակտի տրամադրման պահից 2 տարի, սակայն ոչ ուշ քան եվրոպական կամ այլ երկրներից Սարքավորում(ներ)ի առաքումից հետո 30 ամիս:

4.2 Եթե Գնորդը ժամանակին չի վճարում գումարները, ապա այդ գումարի նկատմամբ Մատակարարը կարող է հաշվարկել տոկոսներ՝ սկսած այն օրվանից, երբ վճարումը պետք է կատարվեր մինչ վճարման օրը:

Տոկոսադրույքի հաշվարկման օրվա դրությամբ տոկոսադրույքը 2%-ով պետք է գերազանցի 6M-Euribor-ին՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

4.3 Սարքավորումների նկատմամբ իրավունքը փոխանցվում է Գնորդին մաքսային տերմինալում կամ Գնորդի կողմից նշված այլ վայրում (մինչև մաքսազերծումը): Մաքսազերծումից հետո Գնորդը պետք է փոխանցի Սարքավորումները Մատակարարին հետագա փոխադրման համար՝ ստորագրելով համապատասխան արձանագրությունը (բացառությամբ Տեղում կատարվող մաքսազերծումների): Բացառությամբ տեղում իրականացվող, Մաքսազերծման ընթացքում (սկսած, երբ Գնորդը ստանում է համապատասխան ծանուցումը Մատակարարից, այն մասին, որ Սարքավորումները պատրաստ են մաքսազերծման համար, մինչև մաքսազերծումը) Գնորդը կրում է Սարքավորումների հետ կապված բոլոր ռիսկերը (ներառյալ Սարքավորումների վնասման): Այն դեպքում, երբ մաքսազերծումը չի կատարվում 3 շաբաթվա ընթացքում Մատակարարի համապատասխան ծանուցումից հետո, այն մասին, որ այդ Սարքավորումները պատրաստ են մաքսազերծման, Գնորդը պարտավոր է հատուցել Մատակարարին իր կողմից կատարած բոլոր ծախսերը (բեռնատարի պարապուրդ և այլն): Պայմանագրի 2.2 կետում նշված հասցեով մատակարարումից հետո Գնորդը պետք է ընդունի Սարքավորումները և ստորագրի՝

<p>and sign the relevant Delivery Notes within 12 hours upon delivery. In case the Delivery Notes are not signed by the Buyer within the mentioned period, the relevant Delivery Notes are deemed to be signed. After signing of the Delivery Notes the Buyer takes over all risks with regard to the Equipment and shall ensure the appropriate warehousing and storage of the Equipment. Upon relevant requests of the Supplier the Buyer shall transfer to the Supplier the requested Item(-s) for further installation by signing of the relevant protocols. Upon acceptance of the Item(-s) into installation and signing of the relevant protocol the Supplier shall take the risks of destruction of Equipment till the execution of the relevant Acceptance Certificate per Item as per Annex 11 confirming that Item(-s) is installed, handed over to the Buyer (including the relevant risks) and stored in certain premise under the Buyer responsibility.</p>	<p>համապատասխան մատակարարման ծանուցումը ստանալուց 12 ժամվա ընթացքում: Մատակարարման Ծանուցումը ստորագրելուց հետո Գնորդը կրում է Սարքավորումների հետ կապված բոլոր ռիսկերը և պետք է ապահովի Սարքավորումների պատշաճ պահեստավորումը և պահպանումը: Մատակարարի դիմումով Գնորդը պետք է Մատակարարին փոխանցի պահանջված Սարքավորում(ներ)ը հետագա տեղադրման համար՝ ստորագրելով համապատասխան արձանագրությունները: Սարքավորում(ներ)ն ընդունելով տեղադրման, և համապատասխան արձանագրությունները ստորագրելով՝ Մատակարարը կրում է Սարքավորումների վնասման ռիսկը մինչև համաձայն Հավելված 11-ի համապատասխան Սարքավորման Ընդունման Ակտի վավերացումը՝ հաստատելով, որ Սարքավորում(ներ)ը տեղադրված է(են), հանձնված է(են) Գնորդին /ներառյալ համապատասխան ռիսկերը/ և պահպանվում են որոշակի վայրում՝ Գնորդի պատասխանատվության տակ:</p>
<p>5. TIME FOR COMPLETION</p> <p>5.1 The Supplier undertakes to execute the Works in accordance with the Time Schedule as per Annex 4 to the Contract.</p> <p>5.2 The Supplier is entitled to amend the Time Schedule at any time according to the progress of the Works; however, the whole scope of Works shall be performed within 12 months as per Annex 4 of the Contract. The date for the handing-over of the Equipment however may only be postponed by mutual written agreement of both Parties. Such amendment shall be valid from the date of notification to the Buyer. In case of completion of the Works before the completion date indicated in Annex 4 the Buyer shall take over the Works in accordance with Clause 11 upon</p>	<p>5. ԱՎԱՐՏՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ</p> <p>5.1 Մատակարարը պարտավորվում է կատարել աշխատանքները՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված 4-ով սահմանված ժամանակացույցի:</p> <p>5.2 Մատակարարն իրավունք ունի ցանկացած պահի փոխելու ժամանակացույցը՝ համաձայն աշխատանքների առաջընթացի, այնուամենայնիվ Աշխատանքների ծավալը պետք է իրականացվի 12 ամսվա ընթացքում՝ համաձայն Հավելված 4-ի: Սարքավորումների հանձման պահը, սակայն, կարող է հետաձգվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Նման փոփոխությունը ուժի մեջ է մտնում Գնորդին ծանուցելու օրվանից: Հավելված 4-ով նախատեսված ավարտման ժամկետից շուտ Աշխատանքներն ավարտելու դեպքում, Գնորդը պարտավոր է պատշաճ ընդունել Աշխատանքները՝</p>

<p>actual completion of the Works and shall effect final payments accordingly.</p> <p>5.3 If for any reasons beyond the control of the Supplier which could not have been reasonably foreseen and provided against, including but not limited to events of Force Majeure as per Clause 10 and/or the non-fulfilment or improper fulfilment of his obligations by the Buyer as per Clauses 4 and 6 the Supplier shall be prevented from executing the Works in accordance with the Time Schedule, the Supplier shall be entitled to an adequate extension of the Time for Completion and compensation of any costs and expenses resulting there from.</p>	<p>համաձայն 11-րդ կետի, Աշխատանքները փաստացի ավարտելու պահից և համապատասխանաբար պարտավոր է կատարել վերջնահաշվարկ:</p> <p>5.3 Եթե Մատակարարից անկախ պատճառներով, որոնք ողջամտորեն հնարավոր չէր կանխատեսել կամ կանխել, ներառյալ, բայց ոչ միայն 10-րդ կետով նախատեսված Ֆորսմաժորային իրավիճակները և/կամ Գնորդի կողմից 4 և 6 կետերով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, Մատակարարը պետք է զերծ մնա ըստ Ժամանակացույցի Աշխատանքների կատարումից, ապա Մատակարարը Ավարտման Ժամկետը համարժեք երկարաձգելու և դրանից բխող ցանկացած ծախսերի փոխհատուցում ստանալու իրավունք կունենա:</p>
<p>6. BUYER'S OBLIGATIONS</p> <p>6.1 The Buyer shall provide to the Supplier free of charge at the quantity and quality and at the times requested by the Supplier the following:</p> <p>a) Performance of the required de-installation works of the fixed equipment (Angiography system, X-Ray system, etc) in accordance with Annex 6.</p> <p>b) Transfer of empty rooms to the Supplier for the preparatory works within the terms as indicated in Annex 4.</p> <p>c) Utilities such as water, sewage, medical gas, electricity, network, etc.</p> <p>d) Free access of the Supplier and his subcontractors to the Site at the date stipulated in the Time Schedule as per Annex 4. The Site shall be in such a condition which enables the Supplier to carry out the Works.</p>	<p>6. ԳՆՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> <p>6.1. Գնորդը պարտավոր է Մատակարարին անվճար ապահովել համապատասխան քանակի և որակի և Մատակարարի կողմից սահմանված ժամկետում հետևյալով՝</p> <p>a/ տեղադրված սարքավորումների (անգիոգրաֆիա համակարգ, ռենտգեն համակարգ և այլն) ապամոնտաժման աշխատանքների իրականացում՝ համաձայն Հավելված 6-ի:</p> <p>b/ դատարկված սենյակների տրամադրում Մատակարարին Հավելված 4-ով սահմանված ժամկետներում:</p> <p>c/ մատակարարումներ, ինչպիսիք են ջուրը, կոյուղին, բժշկական գազը, էլեկտրաէներգիան, ցանցը և այլն:</p> <p>d/ Մատակարարի և նրա ենթակապալառուների ազատ մուտք դեպի Տեղի տարածք 4-րդ Հավելվածով նախատեսված Ժամանակացույցով սահմանված ժամկետներին (Տարածքը պետք է լինի այնպիսի վիճակում, որը թույլ կտա Մատակարարին իրականացնել Աշխատանքները):</p> <p>e/ Մատակարարի և ենթակապալառուների</p>

<p>e) Office facilities in the size of 20 m² for the Supplier's and his subcontractors' personnel including connections for communication facilities such as telephone, internet.</p> <p>f) Lockable, air-conditioned and dust free stores for the storage of the supplied Equipment at the Site.</p> <p>g) Safeguarding of the supplied Equipment and other values for the execution of the Works at the Site.</p> <p>h) Support for the application for visas and/or residence permits for the entry of the Supplier's and his subSuppliers' expatriate personnel into Armenia.</p> <p>i) Support for the application for working permits for the Supplier's and his subSuppliers' expatriate personnel in Armenia.</p> <p>j) Hand over to the Supplier of the Existing Drawings of the Building and other technical information for all buildings / facilities (the current as-built situation as far as this is available) required by the Supplier for the preparation of the adaptation design works</p> <p>k) Means of communication (separate internet line).</p> <p>l) Nomination of a representative(s) of the Buyer which is permanently present at Site and authorized for accepting of works and services performed by the Supplier.</p> <p>m) powers of attorney (to be provided i) upon reasonable requests of the Supplier in cases when required for the Supplier in order to ensure the performance of Works or ii) for representatives of the Buyer in cases stipulated in the present Contract unless they are duly authorised otherwise).</p>	<p>անձնակազմի համար օֆիսային տարածք 20 m² մակերեսով, ներառյալ հաղորդակցման միջոցները, ինչպիսիք են հեռախոսը, ինտերնետը:</p> <p>f/ փակվող, օդափոխությամբ և փոշուց զերծ պահեստներ մատակարարված Սարքավորումների՝ Տեղում պահեստավորման համար:</p> <p>g/ Աշխատանքների կատարման համար Մատակարարված Սարքավորումների և այլ արժեքների պահպանությունը /պահակային ծառայություն/ Տեղում:</p> <p>h/ աջակցություն՝ Մատակարարի և իր ենթակապալառուների օտարերկրյա անձնակազմի Հայաստան մուտք գործելու համար՝ վիզաներ և կացության թույլտվություն ստանալու համար:</p> <p>i/ աջակցություն՝ Մատակարարի և իր ենթակապալառուների օտարերկրյա անձնակազմի համար՝ Հայաստանում աշխատանքի թույլտվություն ստանալու համար դիմելիս:</p> <p>j/ Մատակարարին անհրաժեշտ Շենքի Առկա Գծագրերի և բոլոր շինությունների /ներկայիս կառուցված վիճակում, այնքան ինչքան առկա է/ համար այլ տեխնիկական տեղեկատվության Մատակարարին հանձնումը, հարմարեցման նախագծային աշխատանքների պատրաստման համար:</p> <p>k/ կապի միջոցներ (առանձին ինտերնետի գիծ):</p> <p>l/ Գնորդի ներկայացուցչի (ներկայացուցիչների) նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի տարածքում և իրավասու կլինի Մատակարարի կողմից մատուցված ծառայությունները և կատարված աշխատանքներն ընդունելու համար:</p> <p>m/ լիազորագրեր /տրամադրվում է i) Մատակարարի ողջամիտ պահանջով, այն դեպքերում, երբ դա պարտադիր է Մատակարարի համար ապահովելու Աշխատանքների կատարումը կամ ii) Գնորդի ներկայացուցիչների համար՝ սույն պայմանագրով սահմանված դեպքերում, եթե նրանք այլ կերպ պարզաճ կարգով լիազորված չեն/:</p> <p>n/ Անվտանգության կանոնների պահպանություն</p>
---	--

<p>n) Safety measures at the Site.</p> <p>o) Approval of documents and requests submitted by the Supplier to the Buyer within a period of 10 calendar Days after their submission failing of which the documents respectively requests shall be deemed to be approved by the Buyer. The documents that form an integral part of the Contract shall be bilingual (English and Armenian). All other requests and approvals shall be executed in English language.</p> <p>p) Obtaining of the approvals for the Project Documentation prepared by the Supplier under the present Contract required by the authorities, erection, renovation, commissioning and operation permissions and other statutory approvals whatsoever relevant for fulfilment of the Contract (to the extent as required by the Armenian legislation)</p> <p>q) Import licences and/or similar statutory permissions required for the importation of the Equipment into Armenia</p> <p>r) Notification of the Supplier regarding the address of the terminal or other place where the customs clearance will be performed by the Buyer prior to the dispatch</p> <p>s) Performance of customs clearance and payment of relevant customs duties (if required) as well as of any taxes, duties (including import duties) and fees levied on the Supplier by any authority in Armenia in connection with the performance of the Works</p> <p>t) Obtaining of all government-related approvals to the extent required by the current legislation in Armenia (the approvals may include technical expertise approval, fire protection approval, radiation protection approval, etc) including covering of relevant costs, as well as fulfilment of unforeseen additional requirements such as static</p>	<p>Տեղում:</p> <p>o/ Մատակարարի կողմից Գնորդին ներկայացված փաստաթղթերի և հայտերի հաստատում 10 օրացուցային Օրվա ընթացքում, ինչը չկատարելու դեպքում պատշաճ պահանջված փաստաթղթերը համարվում են հաստատված Գնորդի կողմից: Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող փաստաթղթերը կազմվում են երկլեզու /անգլերեն և հայերեն/: Բոլոր այլ պահանջները և հաստատումներն իրականացվում են անգլերեն լեզվով:</p> <p>p/ սույն Պայմանագրով Մատակարարի կողմից պատրաստած պահանջվող Նախագծային Փաստաթղթերի, մոնտաժային, վերանորոգման և շահագործման թույլտվությունների և այլ հաստատումների ձեռքբերում, որոնք վերաբերում են Պայմանագրի կատարմանը /<< օրենսդրությամբ սահմանված կարգով/:</p> <p>q/ ներմուծման լիցենզիաները և/կամ Սարքավորումները Հայաստան ներմուծելու համար անհրաժեշտ նմանատիպ այլ նորմատիվ թույլտվությունները:</p> <p>r/ մինչև մատակարարումը Մատակարարի ծանուցումը, որը վերաբերում է տերմինալի կամ այլ տարածքի հասցեին, որտեղ Գնորդի կողմից իրականացվելու է մաքսազերծումը:</p> <p>s/ մաքսազերծման և ցանկացած հարկերի, տուրքերի (այդ թվում ներմուծման) վճարների և գանձումների վճարման պարտականությունը կապված Հայաստանում (եթե դա պահանջվում է) Աշխատանքների կատարման հետ՝ դրված է Մատակարարի վրա:</p> <p>t/ Մատակարարի դիմումով ՀՀ գործող օրենսդրությամբ պահանջվող պաշտոնական բոլոր հաստատումների ձեռքբերումը /հաստատումները կարող են ներառել տեխնիկական փորձաքննության հաստատում, հակահրդեհային պաշտպանության հաստատում, ճառագայթային պաշտպանության հաստատում և այլն/ այդ թվում համապատասխան ծախսերի հատուցումը, ինչպես նաև չնախատեսված լրացուցիչ պահանջների կատարումը, ինչպիսիք են՝ ստատիկ հաշվարկներ, երկրաբանական</p>
--	--

<p>calculations, geological research, etc. upon request of the Supplier</p> <p>u) Taking-over of the Equipment after its supply as well as installed Equipment after testing</p> <p>v) Registration / certification of Equipment in Armenia if required</p> <p>w) Any other support which the Supplier may reasonably require from the Buyer for the purpose of the fulfilment of the Contract.</p> <p>6.2 In the event of the necessity of any extra works due to the absence of any architectural and/or engineering data (drawings, plans, descriptions) and/or due to inconsistencies in the Existing Drawings of the Building for the fixed equipment installation, any and all expenses should be covered by the Buyer.</p>	<p>հետազոտություններ և այլն:</p> <p>ս/ մատակարարումից հետո, ինչպես նաև տեղադրված (փորձարկումից հետո) Սարքավորումների ընդունումը:</p> <p>վ/ Սարքավորումների գրանցումը և վավերացումը Հայաստանում, եթե դա պահանջվում է:</p> <p>ա/ Ցանկացած այլ աջակցություն, որը Մատակարարը կարող է ողջամտորեն հայցել Գնորդից պայմանագրի իրականացման նպատակով:</p> <p>6.2. Հիմնական Սարքավորումների տեղադրման համար ցանկացած լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտության դեպքում, որոնք հետևանք են որևէ ճարտարապետական և/կամ ինժեներական տվյալների բացակայության /զծագրեր, նախագծեր, նկարագրեր/ և/կամ Շենքի Առկա Գծագրերի անհամապատասխանության՝ բոլոր ծախսերը կրում է Գնորդը:</p>
<p>7. WARRANTY</p> <p>The Supplier warrants that the Equipment supplied under this Contract shall have no defect arising from design, materials or workmanship or from any act or omission of the Supplier that may develop under normal use of the supplied Equipment in the conditions obtaining in Armenia. In case the Equipment should show such defects during the warranty period the Supplier shall remedy the defects within a reasonable period of time.</p> <p>The warranty shall remain valid for period of 24 months from the date of the handing-over of the Equipment (Item) as per Clause 11 (according to the relevant Acceptance Certificates per Item), however not longer than 30 months after dispatch (shipment) of the respective Equipment (Item) from European or other countries.</p>	<p>7. ԵՐԱՇԽԻՔ</p> <p>Մատակարարը երաշխավորում է, որ սույն Պայմանագրի շրջանակներում մատակարարվող սարքավորումները չեն ունենա թերություններ, որոնք առաջացել են դիզայնից, նյութերից կամ որակից կամ Մատակարարի ցանկացած գործողությունից կամ անգործությունից, որը կարող է առաջանալ մատակարարվող Սարքավորումների օգտագործումից Հայաստանում ձեռք բերելու պայմաններում: Երաշխիքի ժամկետում թերությունների ի հայտ գալու դեպքում Մատակարարը պետք է վերացնի թերությունները ողջամիտ ժամկետում:</p> <p>Համաձայն 11-րդ կետի /համաձայն համապատասխան Սարքավորման Ընդունման Ակտերի/՝ երաշխիքը վավեր է Սարքավորում(ներ)ի հանձման պահից 24 ամիս, սակայն ոչ ավել քան 30 ամիս համապատասխան Սարքավորում(ներ)ի Եվրոպական կամ այլ երկրներից առաքումից հետո:</p> <p>Երաշխիքը չի ծածկում այն թերությունները,</p>

<p>The warranty does not cover the remedy of defects and damage caused by</p> <ul style="list-style-type: none"> ▪ improper operation of the Equipment ▪ non-observance of the operating and maintenance instructions, ▪ damage of the Equipment by the Buyer or third parties ▪ regular wear and tear (including consumables and parts with limited lifetime) 	<p>որոնք պատճառվել են՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Սարքավորումների ոչ պատշաճ օգտագործման հետևանքով, ▪ շահագործման և պահպանման հրահանգները չկատարելու հետևանքով, ▪ Գնորդի կամ երրորդ անձանց կողմից Սարքավորումները վնասելու դեպքում, ▪ բնականոն մաշվածության հետևանքով /ներառյալ՝ ծախսվող նյութերը և այն մասերը, որոնք ունեն օգտագործման սահմանափակ ժամկետ/:
<p>8. LIQUIDATED DAMAGES</p> <p>8.1 In case the Supplier fails by his own fault to hand-over the Equipment within the period indicated in the Time Schedule as per Annex 4 the Supplier shall pay to the Buyer liquidated damages amounting to 0,1% of the value of the delayed part of the Works for each completed week of delay.</p> <p>8.2 However the liquidated damages as per clause 8.1 herein in the aggregate shall not exceed 5% of the value of the delayed Works.</p> <p>8.3 8.3 The liquidated damages paid by the Supplier shall represent the full and final indemnification of all damages incurred by the Buyer as a result of the improper execution of the Works by the Supplier.</p>	<p>8. ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ</p> <p>8.1 Հավելված 4-ով նախատեսված ժամանակացույցով սահմանված ժամանակահատվածում Մատակարարի կողմից Սարքավորումները չհանձնելու դեպքում Մատակարարը պետք է հատուցի Գնորդին վնասների համար՝ վճարելով յուրաքանչյուր ուշացված շաբաթվա համար ուշացված Աշխատանքի արժեքի 0.1%-ի չափով:</p> <p>8.2 Այնուամենայնիվ 8.1 կետով սահմանված վնասները չպետք է գերազանցեն ուշացված /հետաձգված/ Աշխատանքների գնի 5%-ը:</p> <p>8.3 Մատակարարի կողմից հատուցվող վնասները իրենցից ներկայացնում են Գնորդին պատճառված վնասների ամբողջական և վերջնական հատուցում՝ որպես Մատակարարի կողմից Աշխատանքների ոչ պատշաճ իրականացման հետևանք:</p>
<p>9. LIMITATION OF LIABILITY</p> <p>Except in cases of criminal negligence or wilful misconduct:</p> <p>9.1 the Supplier shall not be liable to the Buyer, whether under the Contract, in tort, or otherwise, for any indirect or consequential loss or damage, loss of use, loss of production,</p>	<p>9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱԿՈՒՄԸ</p> <p>Բացառությամբ հանցավոր անփութության և դիտավորյալ հակաիրավական գործողությունների դեպքերի՝</p> <p>9.1 Մատակարարը պատասխանատվություն չի կրում Գնորդի առջև իրավախախտման կամ այլ անուղղակի վնասների, շահագործման անհնարինության, բաց թողնված օգուտի կամ</p>

<p>or loss of profits or interest costs, provided that this exclusion shall not apply to any obligation of the Supplier to pay liquidated damages to the Buyer and</p> <p>9.2 the aggregate liability of the Supplier to the Buyer, whether under the Contract, in tort or otherwise, shall not exceed 50 % of the total Contract Price, provided that this limitation shall not apply to the cost of repairing or replacing defective Equipment.</p>	<p>տոկոսների վճարման ծախսերի կորստի համար, այն պայմանով, որ այդ բացառությունները չպետք է կիրառվեն Մատակարարի՝ Գնորդի վնասները փոխհատուցելու պարտավորության նկատմամբ:</p> <p>9.2 Մատակարարի պատասխանատվությունը Գնորդի առջև, համաձայն Պայմանագրի, առաջացած իրավախախտման հետևանքով կամ այլ պատճառով, չպետք է գերազանցի Պայմանագրի ընդհանուր գինը, պայմանով, որ այս սահմանափակումը չի վերաբերվում թերի Սարքավորումների վերանորոգման կամ փոխարինման ծախսերին:</p>
<p>10. FORCE MAJEURE</p> <p>10.1 A Party is not liable for a failure to perform any of his obligations in so far as it proves:</p> <p>10.1.1 that the failure was due to an impediment beyond its control, and</p> <p>10.1.2 that it could not reasonably be expected to have taken into account the impediment and its effects upon his ability to perform at the time of the signing of the Contract by both Parties, and</p> <p>10.1.3 that it could not reasonably have avoided or overcome it or its effects.</p> <p>10.2 A Party seeking relief shall, as soon as practicable after the impediment and its effects upon his ability to perform become known to him, give notice to the other Party of such impediment and its effects on his ability to perform. Notice shall also be given when the ground of relief ceases.</p> <p>10.3 Failure to give either notice makes the Party thus failing liable in damages or loss which otherwise could have been avoided.</p> <p>A ground of relief under this clause relieves the Party failing to perform from liability in damages, from liquidated damages and other contractual sanctions, except from the duty of</p>	<p>10. ՖՈՐՍ-ՄԱՋՈՐ</p> <p>10.1 Կողմը պատասխանատվություն չի կրում պարտավորությունների չկատարման համար, այն դեպքում, եթե ապացուցում է.</p> <p>10.1.1 որ չկատարումը պայմանավորված էր իրենից անկախ պատճառներով, և</p> <p>10.1.2 աշխատանքների կատարման համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքները և դրանց հետևանքները չէին կարող ողջամտորեն կանխատեսվել և հաշվի առնվել Կողմերի կողմից Պայմանագրի կնքման պահին, և</p> <p>10.1.3 այդ խոչընդոտներից կամ դրանց հետևանքներից ողջամտորեն հնարավոր չէր խուսափել կամ հաղթահարել դրանք:</p> <p>10.2 Տուժած կողմը, աշխատանքների կատարման համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքները և դրանց հետևանքները իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո, պետք է տեղեկացնի մյուս կողմին այդ խոչընդոտների և հանգամանքների մասին: Մի կողմը մյուս կողմին պետք է տեղեկացնի նաև անհաղթահարելի ուժի դեպքում:</p> <p>10.3 Մյուս կողմին խոչընդոտների մասին չտեղեկացնելու դեպքում Կողմն ինքն է պատասխանատվություն կրում վնասների կամ կորուստների համար, որոնք այլ կերպ չէին կարող կանխատեսվել: Անհաղթահարելի ուժը այս պայմանագրում ազատում է տուժած կողմին վնասներից, տույժերից և այլ պայմանագրային</p>

<p>the Buyer to pay interest on money owing as long as and to the extent that the ground subsists and the due payment is delayed.</p> <p>10.4 If the grounds of relief subsist for more than six months, either Party shall be entitled to terminate the Contract with notice.</p>	<p>սանկցիաներից, բացառությամբ Գնորդի՝ գումարին տոկոսներ վճարելու պարտավորության, այնքան ժամանակ և այն չափով, որքան անհաղթահարելի ուժը տևում է և վճարման կատարումը հետաձգվում:</p> <p>10.4 Եթե անհաղթահարելի ուժը տևում է ավելի քան 6 ամիս, Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով մյուս Կողմին:</p>
<p>11. HANDING-OVER OF THE WORKS</p> <p>11.1 Upon completion of the supply, installation, testing and commissioning of the Equipment as well training of the Buyer's staff at Site in accordance with the Contract the Supplier shall hand-over the installed Equipment (Item) as well as Services on Site to the Buyer and the Buyer shall take over the relevant Works.</p> <p>11.2 The handing-over of the Works shall be certified as follows:</p> <p>a) by issuing a "Acceptance Certificate per Item" as per Annex 11 confirming the compliance of the Item and the relevant Services on Site with the stipulations of the Contract;</p> <p>b) by issuing an "Accumulated Acceptance Certificate" as per Annex 12 confirming that all Works and Services on Site are performed by the Supplier.</p> <p>The mentioned Acceptance Certificates shall be signed by both Parties.</p> <p>11.3 The Buyer shall not refuse the issuance of the Acceptance Certificate per Item and/or Accumulated Acceptance Certificate unless the operation of Equipment or such critical components thereof has been considerably obstructed due to substantial defects occurred within the Supplier's responsibility.</p> <p>11.4 The Buyer shall accomplish with the</p>	<p>11. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ</p> <p>11.1 Համաձայն Պայմանագրի՝ Մատակարարը Սարքավորում(ներ)ը մատակարարելուց, տեղադրելուց, փորձարկելուց և շահագործման հանձնելուց, ինչպես նաև անձնակազմը պատրաստելուց անմիջապես հետո Գնորդին է հանձնում տեղադրված Սարքավորում(ներ)ը, ինչպես նաև Ծառայությունները Տեղում, իսկ Գնորդը ընդունում է այն:</p> <p>11.2 Աշխատանքների հանձնումը պետք է հաստատվի հետևյալ կերպ՝</p> <p>a/ Հավելված 11-ի համաձայն Սարքավորման Ընդունման Ակտը տրամադրելով՝ հաստատելով Սարքավորման և Ծառայությունները Տեղում-ի համապատասխանությունը Պայմանագրի դրույթներին,</p> <p>b/ Հավելված 12-ի համաձայն Ընդհանուր Ընդունման Ակտը տրամադրելով՝ հաստատելով որ բոլոր Աշխատանքները և Ծառայությունները Տեղում Մատակարարի կողմից կատարվել են:</p> <p>Վերոնշյալ հանձնման-ընդունման ակտերը պետք է երկկողմանի ստորագրված լինեն:</p> <p>11.3 Գնորդը չպետք է հրաժարվի Սարքավորման Ընդունման Ակտի և/կամ Ընդհանուր Ընդունման Ակտի վավերացումից, եթե Սարքավորում(ներ)ի կամ դրա հիմնական մասերի շահագործումը զգալիորեն չի խափանվել Մատակարարի պատասխանատվության ներքո առաջացած թերությունների հետևանքով:</p> <p>11.4 Գնորդը պետք է ավարտի տեղադրված</p>

taking-over of the installed Equipment (Item) or/and Services on Site and issue the Acceptance Certificate per Item and/or Accumulated Acceptance Certificate within 10 (ten) days from the date of respective Supplier's notification to take-over the installed Equipment and Services on Site. In case the Buyer fails to sign the Acceptance Certificate per Item and/or Accumulated Acceptance Certificate without justified reasons or for reasons beyond the Supplier's liability within 10 (ten) days from the date of respective Supplier's notification to take-over the Works, the Equipment and Services on Site shall be deemed to be handed-over to the Buyer at the date of respective Supplier's notification to the Buyer to take-over the Equipment and Services on Site.

11.5 Irrespective of the issuance of the Acceptance Certificate per Item and/or Accumulated Acceptance Certificate the Equipment (Item) as well as Services on Site shall be deemed to be accepted by the Buyer when the Buyer commence with using the Equipment (Item) or parts therefore either temporarily or permanently. In such case the warranty period for the concerned Equipment shall start upon the date of the deemed acceptance of the Equipment and Services on Site.

11.6 Upon expiry of the Warranty period of Equipment (Item), the Works shall be considered automatically as fully taken-over by the Buyer.

Over the 24 months from the date of the handing-over of the Works, however not longer than 30 months after dispatch (shipment) of the respective Equipment (Item) from European or other countries, Buyer shall accomplish with the final taking-over of the Works and issue the Final Acceptance Certificate within 10 (ten) days from the date of respective Supplier's notification finally to take-over the Works. The

Սարքավորում(ներ)ի և/կամ Ծառայությունները Տեղում ընդունումը և տրամադրի Սարքավորման Ընդունման Ակտը և/կամ Ընդհանուր Ընդունման Ակտը տեղադրված Սարքավորում(ներ)ի և Ծառայությունները Տեղում ընդունման վերաբերյալ Մատակարարի ծանուցումից 10/տասը/ օրվա ընթացքում: Եթե Գնորդը առանց հիմնավոր պատճառների մերժում է Սարքավորման Ընդունման Ակտի և/կամ Ընդհանուր Ընդունման Ակտի վավերացումը Գնորդի կողմից Մատակարարի Աշխատանքները, Սարքավորումները և Ծառայությունները Տեղում ընդունելու մասին գրավոր ծանուցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, ապա Սարքավորումները և Ծառայությունները Տեղում համարվում են ընդունված Մատակարարի կողմից դրանք ընդունելու մասին գրավոր ծանուցումը Գնորդին ներկայացնելու օրը:

11.5 Անկախ Սարքավորում(ներ)ի Ընդունման Ակտի և/կամ Ընդհանուր Ընդունման Ակտի, ինչպես նաև Ծառայությունները Տեղում-ի վավերացումից, դրանք համարվում են ընդունված Գնորդի կողմից այն պահից, երբ վերջինս սկսում է Սարքավորում(ներ)ը կամ դրա մասերը օգտագործել ժամանակավորապես կամ մշտապես: Տվյալ դեպքում Սարքավորում(ներ)ի երաշխավորության ժամկետը սկսվում է հաշվարկվել, երբ Սարքավորում(ներ)ը կամ Ծառայությունները Տեղում համարվում են ընդունված:

11.6 Սարքավորում(ներ)ի Երաշխիքային ժամկետի ավարտից հետո, Աշխատանքները համարվում են ինքնաբերաբար ամբողջությամբ ընդունված Գնորդի կողմից: Աշխատանքների հանձնման օրվանից շուրջ 24 ամիս, սակայն ոչ ավել քան 30 ամիս համապատասխան Սարքավորում(ներ)ի Եվրոպական կամ այլ երկրներից առաքումից հետո Գնորդը պետք է ավարտի Աշխատանքների վերջնական ընդունումը և վավերացնի Վերջնական Ընդունման Ակտը՝ Մատակարարի ծանուցումից 10/տասը/ օրվա ընթացքում: Գնորդի կողմից Վերջնական Ընդունման Ակտի տրամադրումը չպետք է մերժվի

<p>issuance of the Final Acceptance Certificate by Buyer shall not be withheld without justified reasons or for reasons beyond the Supplier's liability. In case the Supplier doesn't sign the Final Acceptance Certificate and doesn't provide the Supplier with reasonable grounds for refusal within the mentioned period, the Final Acceptance Certificate shall be deemed as signed.</p>	<p>առանց ողջամիտ պատճառների կամ Մատակարարից անկախ պատճառներով: Այն դեպքում, երբ Մատակարարը չի ստորագրում Վերջնական Ընդունման Ակտը և սահմանված ժամկետում Մատակարարին չի ներկայացնում մերժման պատճառաբանված հիմքերը՝ Վերջնական Ընդունման Ակտը համարվում է ստորագրված:</p>
<p>12. RESOLUTION OF DISPUTES</p> <p>12.1 All disputes arising out of or in connection with the present Contract shall, whenever possible, be settled amicably by negotiations between the Parties of this Contract. Should the Parties not reach an agreement, the disputes shall be finally settled under the Rules of Arbitration of the International Chamber of Commerce by one or three arbitrators appointed in accordance with the Rules. The Emergency Arbitrator Provisions shall not apply.</p> <p>12.2 The place of Arbitration shall be Vienna, Austria.</p> <p>12.3 The language to be used in the arbitral proceedings shall be English.</p>	<p>12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ</p> <p>12.1. Բոլոր վեճերը, որոնք ծագում են կամ կապված են սույն Պայմանագրի կատարման հետ լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը կարգավորվում են Միջազգային Առևտրային Արբիտրաժի Կանոններով, այդ կանոնների համաձայն նշանակված մեկ կամ երեք արբիտրերի կողմից: Արտակարգ Արբիտրերի Պայմանները չպետք է կիրառվեն:</p> <p>12.2. Արբիտրաժի վայրն է Վիեննա, Ավստրիա:</p> <p>12.3. Արբիտրաժի անցկացման լեզուն անգլերենն է:</p>
<p>13. APPLICABLE LAW</p> <p>13.1 This Contract shall be governed by the substantive Law of Austria excluding the rules concerning the collision of norms and excluding the stipulations of the „United Nations Convention on Contracts for the International Sale of Goods” (Vienna convention of 1980).</p>	<p>13. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ</p> <p>13.1 Սույն պայմանագիրը պետք է ղեկավարվի Ավստրիայի նյութական իրավունքի նորմերով, բացառությամբ նորմերի հակասությանը վերաբերող կանոնների և բացառությամբ «Ապրանքների միջազգային առուվաճառքի մասին պայմանագրերի վերաբերյալ Միացյալ Ազգերի Կոնվենցիայի» (Վիեննայի կոնվենցիա 1980):</p>
<p>14. EFFECTIVENESS OF THE CONTRACT AND COMMENCEMENT DATE</p>	<p>14. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿՍԵԼՈՒ ՕՐԸ</p>

<p>14.1 This Contract shall become binding and effective at the date of its signature by both Parties.</p> <p>14.2 The Commencement Date shall be the date of the fulfilment of all of the following conditions:</p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>Nonclusion and coming into force of Soft Loan Agreement</i> ▪ <i>Advance payment guarantee as per Annex 8 of the Contract to be provided to the Buyer</i> ▪ <i>Performance bond as per Annex 9 of the Contract to be provided to the Buyer</i> ▪ <i>Receipt by the Supplier of the advance payment referred to in Clause 4.1.1</i> <p>14.3 In case the conditions stipulated in Clause 14.2. are not fulfilled until 30.12.17 the Contract Price shall increase by 0,25% for each month.</p> <p>14.4 In case the conditions stipulated in Clause 14.2 are not fulfilled until 30.06.17 the Supplier shall be entitled to terminate the Contract in which case no Party shall have any claim against the other Party.</p>	<p>14.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից:</p> <p>14.2 Սկսելու Օրը հետևյալ բոլոր պայմանների կատարման օրն է՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Արտոնյալ Վարկային Պայմանագրի կնքումը և ուժի մեջ մտնելը, ▪ Պայմանագրի 8-րդ Հավելվածով նախատեսված կանխավճարի երաշխիքի տրամադրում Գնորդին, ▪ Պայմանագրի 9-րդ Հավելվածով նախատեսված Կատարողական երաշխիքի տրամադրում Գնորդին: ▪ Մատակարարի կողմից Պայմանագրի 4.1.1. կետով սահմանված կանխավճարի ստացում: <p>14.3 Եթե 14.2 կետով սահմանված պայմանները չեն կատարվում մինչև 30.12.17 թվականը, ապա Պայմանագրի գինն ավելանում է 0.25%-ով յուրաքանչյուր ամսվա համար:</p> <p>14.4 Եթե 14.2 կետով սահմանված պայմանները չեն կատարվում մինչև 30.06.17 թվականը, ապա Մատակարարը կարող է լուծել Պայմանագիրը, և այդ դեպքում մի Կողմը մյուս Կողմի հանդեպ որևէ պահանջ չպետք է ունենա:</p>
<p>15. MISCELLANEOUS</p> <p>15.1 AMENDMENTS</p> <p>All amendments of the Contract shall only be considered as binding if they have been drawn-up in writing and have been signed by both Parties' duly authorized representatives.</p> <p>15.2 SEVERABILITY</p> <p>If any provision of this Contract or part thereof is rendered void, illegal or unenforceable in any respect under any</p>	<p>15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ</p> <p>15.1 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> <p>Պայմանագրի բոլոր փոփոխությունները կատարվում են միայն գրավոր և հաստատվում են երկկողմանի ստորագրությամբ՝ երկու Կողմերի պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների կողմից:</p> <p>15.2 ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Եթե սույն պայմանագրի որևէ մաս կամ դրույթ ճանաչվի անվավեր, անօրինական կամ ուժը կորցրած ցանկացած պարագայում ցանկացած</p>

applicable law, the validity, legality and enforceability of the remaining provisions shall not in any way be affected or impaired.

15.3 LEGAL SUCCESSION

The provisions of this Contract shall be binding on all persons claiming under or in the name of the respective Parties and shall continue to be valid and binding for all purposes whatsoever notwithstanding any change (whether by reason of amalgamation, incorporation, liquidation, reconstruction, winding up or otherwise howsoever) in their name, style and constitution or composition.

15.4 INTELLECTUAL AND INDUSTRIAL PROPERTY RIGHTS

Unless otherwise agreed, the Buyer does not acquire any property rights in software, drawings, etc. which are made available to him.

The Supplier also remains the exclusive owner of any intellectual or industrial property rights relating to the Equipment.

15.5 COSTS OF CONTRACT

Each Party shall bear its own costs (including, without limitation, duties, taxes, fees, expenses and charges of whatsoever nature) payable in connection with or incidental to the preparation, negotiation, issue, signature, delivery and registration of this Contract.

15.6 ASSIGNMENT AND SUBCONTRACTING

Neither of the Parties may assign this Contract or any of its rights and obligations

կիրառելի օրենքի դեպքում, ապա դա չի սահմանափակի կամ որևէ կերպ չի ազդի մնացած բոլոր դրույթների վավերականության, օրինականության և կիրառելիության վրա:

15.3 ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Սույն պայմանագրի դրույթները տարածվում են այն բոլոր անձանց վրա, ովքեր հանդես են գալիս համապատասխան Կողմերի անունից և շարունակում են վավեր մնալ և տարածվել բոլոր դեպքերում՝ անկախ իրենց անվանման, ոճի, կառուցվածքի կամ կազմի ցանկացած փոփոխության /միաձուլում, միավորում, լուծարում, վերակառուցում, գործունեության դադարեցում և այլն/:

15.4 ՄՏԱՎՈՐ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գնորդը չի կարող ձեռք բերել որևէ սեփականության իրավունք ծրագրային ապահովման, գծագրի և այլնի նկատմամբ, որոնք հասանելի են իրեն, եթե ձեռք չեն բերում այլ համաձայնություն: Մատակարարը շարունակում է մնալ Սարքավորումների հետ կապված բոլոր մտավոր և առևտրային սեփականության իրավունքների բացառիկ սեփականատերը:

15.5 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

Յուրաքանչյուր կողմ պետք է կրի իր սեփական ծախսերը (ներառյալ հարկերը, տուրքերը, ծախսերը, գանձումները և այլ տեսակի վճարումները), որոնք ենթակա են վճարման Պայմանագրի նախապատրաստման, բանակցությունների, ստորագրման և գրանցման հետ կապված:

15.6 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՎ ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կողմերից ոչ մեկը չի կարող փոխանցել սույն Պայմանագիրը կամ սույն Պայմանագրով

under it without the prior written consent of the other Party, except the following:

The Supplier may assign any monies payable or to become payable to it by the Buyer under the Contract in favour of that Supplier's bankers;

The Supplier is entitled without the Buyer's permission to assign all rights and obligations under this Contract to any company which belongs to VAMED-Group.

The Supplier is entitled to subcontract any part of Works and Services hereof subject to prior approval of the Buyer. In case the Buyer does not provide any reasonable objections within 3 working days upon receiving of the relevant request of the Supplier, the relevant approval shall be deemed as granted.

15.7 INVALIDITY OF PRIOR AGREEMENTS

After signing this Contract, all preceding written and/or oral agreements and/or correspondence on the subject of the Contract shall become null and void unless expressly referred to in the Contract.

15.8 LANGUAGE OF CORRESPONDENCE

All correspondence between the Parties shall be made in English language.

The Contract Documents as per Clause 15.10 of the Contract shall be bilingual: in English and Armenian languages.

All other documents and Technical Documentation shall be in English unless a document has been originally worked-out in

ստանձնած ցանկացած իրավունք կամ պարտականություն, առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

Մատակարարը կարող է փոխանցել վճարման ենթակա ցանկացած գումարները կամ Գնորդի կողմից իրեն վճարման ենթակա գումարները՝ հոգուտ Մատակարարի բանկիրների,

Մատակարարը իրավասու է առանց Գնորդի թույլտվության փոխանցելու սույն Պայմանագրով ստանձնած բոլոր իրավունքներն ու պարտականությունները VAMED-Գրուպին պատկանող ցանկացած ընկերության:

Կապալառուն իրավունք ունի կնքել Աշխատանքների և Ծառայությունների մատուցման ցանկացած ենթակապալի պայմանագիր: Այն դեպքում, երբ Գնորդը Մատակարարի կողմից համապատասխան ծանուցումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացնում որևէ ողջամիտ առարկություն, ապա այդպիսի պայմանագիրը համարվում է ընդունված:

15.7 ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Պայմանագրի կնքումից հետո, բոլոր նախորդող գրավոր և բանավոր համաձայնությունները, կապված Պայմանագրի առարկայի հետ, առոչինչ են և անվավեր, քանի դեռ այդ մասին ուղղակիորեն նշված չէ համաձայնագրում:

15.8 ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵՂՈՒՆ

Ամբողջ նամակագրությունը Կողմերի միջև պետք է իրականացվի անգլերեն լեզվով:

Պայմանագրի 15.10 կետում նշված փաստաթղթերը պետք է լինեն երկլեզու՝ անգլերեն և հայերեն լեզուներով:

Բոլոր այլ փաստաթղթերը և տեխնիկական փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն, եթե փաստաթուղթն ի սկզբանե կազմված է հայերեն

Armenian or Russian language or unless otherwise agreed by the Parties in writing.

15.9 NOTICES

Any notice to be given by either Party to this Contract shall be in writing and shall be deemed duly served on the Party to be served if delivered personally or by prepaid registered post to the address (or by fax to the fax number) of that party set opposite its name below:

Buyer:

13 Armenakyan Str, Nork, Yerevan 0047,
Republic of Armenia
Attn.: Lida Muradyan
Tel.: +37410 65-09-71
Fax: +374 65-05-60, +374 65-38-69
e-mail: heart@nmmc.am

Supplier:

Sterngasse 5, A-1232 Vienna, Austria.
Attn. Andrey Pinchuk
Tel./Fax: +_____
e-mail: _____

or at such other address (or fax number) as the Party to be served may have notified (in accordance with the provisions of this Clause) for the purposes of this Contract.

15.10 CONTRACT DOCUMENTS

The following documents shall be deemed to form and be read and construed as essential part of the Contract:

Annex 1: Bill of Quantities

Annex 1A: Bill of Quantities with unit prices

կամ ռուսերեն կամ եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ Կողմերի կողմից:

15.9 ԾԱՆՈԹՑՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրի հետ կապված ցանակացած Կողմի կողմից տրվող գրավոր ծանուցումները կհամարվեն պատշաճ ձևով ուղարկված, եթե անձամբ կամ նախապես պատվիրված ծանուցմամբ՝ (կամ ֆաքսով) ուղարկված են հետևյալ հասցեներով՝

Գնորդ՝

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0047, Նորք, Արմենակյան փողոց, 13
Հասցեատեր՝ Լիդա Մուրադյան
Հեռ.՝ +37410 65-09-71
Ֆաքս՝ +374 65-05-60, +374 65-38-69
Էլ.-փոստ՝ heart@nmmc.am

Մատակարար՝ _____

հասցե՝ Ավստրիա, Վիեննա A-1230, Շտեռնգասսե 5
Հասցեատեր՝ Անդրեյ Պինչուկ
Հեռ./Ֆաքս՝ _____
Էլ.-փոստ՝ _____

կամ ցանկացած այլ հասցեով (կամ ֆաքսով), որի մասին Կողմը տեղեկացվել է (այս կետի դրույթներին համապատասխան) սույն Պայմանագրի հետ կապված նպատակների իրականացման համար:

15.10 ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հետևյալ փաստաթղթերը հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը՝

Հավելված 1 – Ծավալաթերթ

Հավելված 1A – Ծավալաթերթը գներով

Annex 2: Technical Specifications	Հավելված 2 – Տեխնիկական Մասնավորագրեր
Annex 3: Conceptual Layout of the Adaptation Works	Հավելված 3 – Վերափոխման Աշխատանքների կոնցեպտուալ Գծագրեր
Annex 4: Time Schedule	Հավելված 4 – Ժամանակացույց
Annex 5: Specification of Services and Exclusions.	Հավելված 5 – Ծառայությունների և Բացառությունների Մասնավորագիր
Annex 6: Specification of preparatory (pre-installation) works	Հավելված 6 – Նախապատրաստական /նախատեղադրման/ աշխատանքների մասնավորագիր
Annex 7: Preliminary Training Schedule	Հավելված 7 – Նախնական Վերապատրաստման Ժամանակացույց
Annex 8: Form of Advance Payment Guarantee	Հավելված 8 – Կանխավճարի Երաշխիքի օրինակ
Annex 9: Form of Performance Bond	Հավելված 9 – Կատարողականի Երաշխիքի օրինակ
Annex 10: Form of Warranty Bond	Հավելված 10 – Երաշխիքային պարտավորության օրինակ
Annex 11: Acceptance Certificate per Item Template	Հավելված 11 – Սարքավորման Ընդունման Ակտի օրինակ
Annex 12: Accumulated Acceptance Certificate Template	Հավելված 12 – Ընդհանուր Ընդունման Ակտի օրինակ
Annex 13: Final Acceptance Certificate Template	Հավելված 13 – Վերջնական Ընդունման Ակտի օրինակ
In case of discrepancy or contradiction between provision of the Contract and an Annex hereto, the provision of the Contract shall prevail.	Պայմանագրի դրույթի և Հավելվածի անհամապատասխանության կամ հակասության դեպքում Պայմանագրի դրույթը գերակայում է:
In case of discrepancies between the Annexes, the Annexes shall prevail over each other in the above mentioned order.	Հավելվածների միջև անհամապատասխանության առկայության դեպքում միմյանց նկատմամբ գերակայում են վերը նշված հաջորդականությամբ:
15.11 COPIES OF CONTRACT	15.11 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
This Contract shall be drawn up in two (2)	Պայմանագիրը կնքվում է երկու բնօրինակից,

originals and each Party shall receive one (1) original copy of this Contract.

15.12 NON-WAIVER

A Party's failure to exercise or delay in exercising any right, power or privilege under this Contract shall not operate as a waiver; nor shall any single or partial exercise of any right, power or privilege preclude any other or further exercise thereof.

15.13 CONFIDENTIALITY

The text of the Contract, all official correspondence and negotiations between the Parties in connection with the execution of the Contract, as well as any other information related to the Project, Contract or pertaining the business activities of the Parties shall be treated as commercial secret/confidential information and may not be revealed.

Both Parties undertake to keep the Contract and all documentation, specifications, correspondence, negotiations related to it confidential and not to reveal such information and documents to third parties unless the written approval of other Party is granted or such reveal is required under the mandatory provisions of the applicable legislation.

15.14 ENTIRE AGREEMENT

This Contract embodies the entire understanding of the Parties concerning its subject matter. To such end, the Parties agree that there are no promises, terms, conditions

յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական բնօրինակ:

15.12 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Կողմի կողմից սույն պայմանագրով իր ցանկացած իրավունքների, իրավասությունների և արտոնությունների չկատարումը կամ իրականացման հետաձգումը, չի համարվում իրաժարում, ինչպես նաև Կողմի կողմից ցանկացած իրավունքի, իրավասության կամ արտոնության միանգամյա կամ մասնակի կատարումը չի հանդիսանում արգելք դրանց այլ կամ հետագա իրականացման համար:

15.13 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրի տեքստը, բոլոր պաշտոնական գրագրությունները և պայմանագրի կատարման հետ կապված բոլոր բանակցությունները, ինչպես նաև նախագծի հետ կապված ցանկացած այլ տեղեկատվություն՝ կապված Կողմերի բիզնես գործունեության կամ Պայմանագրի իրականացման հետ, հանդիսանում է առևտրային գաղտնիք /գաղտնի տեղեկատվություն/ և չի կարող հրապարակվել:

Կողմերը պարտավորվում են պահպանել պայմանագրի և այլ փաստաթղթերի, մասնավորագրերի, նամակագրությունների, բանակցությունների գաղտնիությունը և չբացահայտել նման տեղեկությունները և փաստաթղթերը երրորդ անձանց, մինչև մյուս կողմի գրավոր համաձայնությունը չի ներկայացվում կամ այդպիսի համաձայնությունը պահանջվում է կիրառելի օրենսդրության պարտադիր դրույթներին համապատասխան:

15.14 ԱՄԲՈՂՋ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Սույն Պայմանագիրը ներառում է պայմանագրի առարկայի հետ կապված Կողմերի բոլոր նկատառումները: Կողմերը ընդունում են, որ չկան այլ խոստումներ, այլ կարգ և պայմաններ կամ

<p>or obligations (oral or written, expressed or implied) other than those contained in this Contract.</p> <p>15.15 LANGUAGE OF CONTRACT</p> <p>This Contract is executed in the English and Armenian language.</p> <p>In case of discrepancies between the English version and the Armenian version of the Contract the English version shall prevail.</p>	<p>պարտականություններ (գրավոր կամ բանավոր ձևով արտահայտված կամ ենթադրված) բացի նրանցից, որոնք ներառված են սույն Պայմանագրում:</p> <p>15.15 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵՁՈՒՆ</p> <p>Պայմանագիրը կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով:</p> <p>Պայմանագրի անգլերեն և հայերեն տարբերակների միջև հակասությունների առկայության դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է:</p>
<p>LEGAL ADDRESSES AND BANKING DETAILS OF THE PARTIES</p> <p><u>Buyer</u></p> <p>Closed Joint Stock Company “Nork Marash” Medical Center 13 Armenakyan Street, Nork, Yerevan 0047, Republic of Armenia</p> <p>Intermediary Bank: SWIFT: COBADEFF COMMERZBANK AG Frankfurt am Main, Germany</p> <p>Beneficiary’s Bank: SWIFT: ARMNAM22 ARMBUSINESSBANK 48 Nalbandyan st., Yerevan, Armenia Account Number: 400887140200EUR with Intermediary bank Beneficiary: Nork Marash Medical Center CJSC EUR Account Number 1150001612200104 with ARMBUSINESSBANK</p> <p><u>Supplier</u></p>	<p>ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ</p> <p><u>Գնորդ</u></p> <p>«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0047, Նորք, Արմենակյան փողոց, 13</p> <p>Միջնորդ Բանկ՝ SWIFT: COBADEFF COMMERZBANK AG Frankfurt am Main, Germany</p> <p>Շահառուի Բանկ: SWIFT: ARMNAM22 ARMBUSINESSBANK Նալբանդյան փող 48, Երևան, Հայաստան Հ/Հ: 400887140200EUR Միջնորդ բանկի հետ Շահառու՝ Նորք Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ ԵՎՐՈ Հ/Հ՝ 1150001612200104 ARMBUSINESSBANK</p> <p><u>Մատակարար</u></p>

VAMED ENGINEERING GmbH

Sterngasse 5, A-1230 Vienna, Austria

Registration No. FN 162841 y

Account No. 109 112 578 00

UniCredit Bank Austria AG

Schottengasse 6-8,

1010 Vienna, Austria

BIC: BKAUATWW

IBAN AT 16 1200 0109 1125 7800

Erste Group Bank AG

Am Belvedere 1, 1100 Vienna

IBAN: AT62 2010 0000 0121 1021

BIC: GIBAATWG

VAMED ENGINEERING GmbH

Շտեռնգասսե 5, A-1230 Վիեննա, Ավստրիա

Գրանցման համար՝ FN 162841 y

Հ/Հ՝ 109 112 578 00

UniCredit Bank Austria AG

Schottengasse 6-8,

1010 Vienna, Austria

BIC: BKAUATWW

IBAN AT 16 1200 0109 1125 7800

Erste Group Bank AG

Am Belvedere 1, 1100 Vienna

IBAN: AT62 2010 0000 0121 1021

BIC: GIBAATWG

This Contract has been signed in the City of
Yerevan on December 21, 2016.

Սույն Պայմանագիրը ստորագրված է քաղաք
Երևանում 2016թ.-ի դեկտեմբերի 21-ին:

For and on behalf of the Supplier

Մատակարարի համար և նրա անունից

For and on behalf of the Buyer

Գնորդի համար և նրա անունից

Peter Werner / Պիտեր Վեռներ

Authorized person / Լիազորված անձ

Lida Muradyan / Լիդա Մուրադյան

Director / Տնօրեն

Tomas Chal / Թոմաս Չալ

Authorized person / Լիազորված անձ

